# ԱՐԵՒԵԼԵԱՆ

# ՄԱՄՈՒԼ

**1871**

**ՄԱՅԻՍ**

Ա. ՏԱՐԻ — ԹԻՒ 5

## ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ


ԱՐՇՐԱՅԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ
ՄԱՐԴԱՍԻԲԵԱՆ ԶՆԿԵՑՈՒԹԻՒՆ ԻՐՔ
ԲՈՒՏԱՆԻՒ
ՊՈՒԱԼՕ
ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԻՒՆԻՆ
ՇԲՔԱՄԱԼԻՍ ՔՈՒԿԻՆԻՆ ՄԷՋ
ԻԼՖՕՐՍ ՀԱՅՈՑ ՎԻՐԱՑ ԿԻՍՈՒՆ
ՔԱՂԱՔԱՑԻՈՒ
ԻՍԱՆՈՒ
Տ. Գ. ՊԵՏՐՈՍԵԱՆ (ՍԿՍԱԾ)



ՋԱՄԻՒՌԻ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԻՏԷԵԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ

# ՄԱՄՈՒԼ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍԵԱՅ

Ա. ՏԱՐԻ ՄԱՅԻՍ 1871 ԹԻՒ 5

## ՄԱՅՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

Գ

### ՎՏԱՆԳԱԼԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆՆԵՐ.—Ի՞ՆՉ ԿԵՐՊՈՎ ՏՂԱՌ ՍՏԱԽՕՍ ԵՒ ԵՐԿՉՈՏ Կ'ԴԱՌՆԱՆ։

Այս անպամ երկու բարեկամուհիք երկարօրէն խօսելու առեն ; Տիկին Տէր՝, վերջապէս խօսքը դարձուց այն աղջկան թիւնեբուն վրայ որով սպասաւորներ ստէպ կ'աղջէն տղայ, երբ յանձախ անոնց մէջ կ'մնան։ «Երբ խաղալիկ կ'պարծածեն զանոնք, կ'ըսէր նա, և ամէն տեսակ նեղութեան և կապկութեան կ'վարժեն։ Ըստ հաճոյս՝ անոնց կ'հակառակին կամ կ'հնազանդին։ մերթ անոնց խենդու խելառ բաներ կ'սովրեցնեն և մերթ խելքի փչածը կ'կատարեն. և ահա այս պատճառաւ երախաները կամհամ՝, խեռ և ստահակ կ'դառնան։

—Այս բառական չէ, կրկնեց Մաթիլդ, սպասաւորներն անոնց խաբել կ'սովրեցնեն, գեռ երէկ ասոր փորձը տեսայ. հիմակ քեզի պիտի պատմեմ։

«Տղաս քովն նստեր էր և ձեռքը պատառ մ'եղած հայ ունէր, որուն հոտէն կատուն եկեր և սքլեր կեցեր էր որպէս զի զայն յափշտակէ. Պօղոս կատուին կ'նայէր և հայը աղատելու համար ետին կ'պահէր. «Քիչ մը սա կատուին հայէդ տուր, ըսի անոր. նայէ աչքը վրադ տնկեր է։» Տղաս երեսս կ'նայի և պատառը աւելի լաւ պահելով՝ կըսէ, —Մայր իմ, հաց չունիմ։ —Ինչպէս չունիս, ահա ձեռքդ բռներ ես։» Իմ փոքրիկ չարաճճիս շուտ մը պատառը դեռևին կ'դնէ, և երկու ձեռները ցոյց տալով ինձ կ'կրկնէ. «Տես, հաց չունիմ.» Վերջը կատուին կ'դառնայ և կ'ըսէ, «Կատուիկ, հացիկս հատա։

«Բայց կատուն, որ կոկիկն հոտը լաւ կ'առնուր, փոքրիկ ստախօսը կանխաւ պատժեր էր. վասն զի կոգաւոր հացը վարպետութեամբ մը գողնալով՝ տաեր տարեր էր։ Որդիս տեսնելով որ կատուն փախեր է, կ'դառնայ իր հայն առնլու և երբ չգտներ կ'սկսի ճչել։ Եւ որովհետև ծառաները ստիպ այս խաբէական ձևն իրենց ըրած պիտի լինին, որդիս ալ կարծեց թէ իր պատառը ես դողցեր եմ։ Այն ատեն ձեռներս բռնեց ուրսաւ։ «Դո՛ւ տաիր, դու, տո՛ւր նայիմ, կուզեմ.» Դուռը դոց էր, կատուն սենեկէն դուրս ելնել չկրնալով՝ սեղանի մը տակ ապաւներ էր, և այն տեղ դողցնի հացը կուտէր։ Պօղոս ըսի որ կատուն նայի, ասոր վրայ շատ զարմացաւ և իր հայն առնուլ ուզեց, ուրիշ պատառ մը տուի և լացը կարեց։

—Սիրելիս, ըսաւ Մարի, ոչ միայն ծառաները այս տեսակ տուտուպատիր խաղեր կ'սովրեցնեն տղոց դլխացաւէ ազատելու համար, այլ կան նաև շատ մը մայրեր որ այս ծուռ ընթացքը կ'բրուներն և չեն մտածեր որ ասով խաբէութեան առաջին դասեր իրենք կ'տան անոնց։ Այս անփորձ և տղէտ էակները կ'խաբեն՝ որպէս զի ինչ որ անոնց խելքէն չեն կարող ստանալ դիւրահաւանութեանէ ձեռք ձգեն։ Շատ անգամ դիտեր եմ որ չեն վարանիր իսկ տղոց սիրտը վախ ձգելու, որպէս զի իրենց վատնպաւոր կարծած տեղերն երթալու արգիլեն։ «Թէ որ այնտեղ երթաս, կ'ըսեն ա՛նոնց, խոշոր դազան մը կայ որ քեզ պիտի ուտէ։» Այսպիսի մայրեր չեն մտածեր թէ ի՛նչ մեծ անպատեհութիւն կ'ծագի երբ մը-

տացածին բաներով տղոյ սհ կ'աղդեն, և ոչ կ'խորհին թէ մեծադոյն չարիք կ'պատահի երբ տղաք հասկնան որ զանոնք խաբելու դիտաւորութիւն ունինք։ Մենք կ'կարծենք թէ երկու երէք տարեկան երախաներ բան մը չեն դիտեր, բան մը չեն ըմբռներ, սակայն եթէ հոգ տանինք 'ի մօտաւոր անոնց շարժումները քննելու՝ իսկոյն մեր սխալմունքը կ'ուղղենք։

Աւելի լաւ կ'լինէր, ըսաւ Տիկին Վէօրնէօյլ, անոնց վախ ու խաբ տալու փորձը մէկդի ձգել և վտանգ մ'իրապէս զգայնել։

—Այդ ըսածդ արդէն աղջկանս վրայ փորձ ըրի։ Շատ անգամ տեսեր էի որ թաթիկը վառ մոմի մը Գերկնցնէր բոյը բռնելու մը-տոք։ Իրիկուն մ'աղջիկս մեղմիկ և զգուշութեամբ մօտեցուցի մոմին, որպէս զի կրակին ազդեցութիւնն անոր զգալ տամ՝, առանց վտանգի։ Իսկոյն ձեռքը քաշեց, և մատը ցոյց տալով ինձ սկսաւ մրմռալ։ Ես ալ ցաւ ու վիշտ յայտնելով՝ զանի փայփայեցի և սրփոփեցի։ Վերջը ուղղելով գիտնալ թէ արդեօք այս փորձը արդիւնք մ'ունեցաւ, Ճրագը Իպորայիս մօտ բերի և խնդրեցի որ անոր դպի։ Իպորան ձեռքը քաշեց մերժելով։ Այնպէս հարկ էր վառարանին կրակէն աչքը վախցնել, անոր մօտ բերի թէ ածուխ և թէ վառած խարոյկ մը, որպէս զի այս երկու նիւթերուն բոցին հետ ունեցած նմանութիւնն հասկնալու կարող լինի, քանի որ վերջնոյն ազդեցութիւնն արդէն գիտեր։ Սակայն մի՛ կարծէր թէ կրակին զօրութիւնն աղջիկս յայտնելէն ետև անկից պատահելիք դիպուածներու վրայ անհոգ կեցայ։ Կը սխալիս սիրելիս. կրակապահը չվերցուցի բնաւ. վասն զի տղան ածուխին կամ՝ բոցին դպելու փափաք չունենալով անդամ՝ կրնար կրակին մօտ դալ, մէջն ընկնիլ և իր հանդերձն այրել։ Երբ տղաք փորձով կ'սկսին սովրիլ թէ ինչ ցաւալի հետեւանքներ կրնան ծագիլ այս կամ այն գործէն՝ անկից զգուշանալու համար աւելի շուտով խօսք մտիկ կ'ընեն. բայց զարձեալ կարելի չէ զանոնք լեռվին զգոյշ պահել վտանգէ։ Օրինակի համար, ինչ մէջոց կրնաս գործածել որ որդիդ ջրհորն ընկնելէն զգուշանայ, երբ խելքին փչէ՝ անոր յատակը տեսնելու մտօք՝ ջրհորին բերանը ծռիլ։

—Այսպիսի ծանր պարագաներու համար՝ լաւագոյն բանն է նախատեսութիւնը։ Եւ իրօք այս նախատեսութենէ ազատ մնալու համար է որ ծառաները խրատելիներ կ'գործածեն։ Այսպիսի պարագաներու մէջ՝ անոնց սպառնալիքէն իմ՝ փոքրիկ Պօղոս ոյնչափ

երկչոտ դարձեր է որ՝ երբ մութը մնայ՝ վլվլուկ կ'հանէ և կ'զարհուրի : Կան բաներ , որ յսրեկն անպամ իրեն երկիւղ կ'ազդեն և միշտ ահ ու դողով անոնցմէ կ'հեռանայ :

—Շատ հաւանական է որ իմ Խղճրայիս հետ ալ այսպէս վարուած լինին , հսկողութիւնս 'ի դերև հանելով . վասն զի արդէն աուիթ ունեցեր եմ իր զգացած այսպիսի սարսափներն բուժելու : Իր դէմքը կ'կարկամէր երբ կլորաձև ձիու մաղէ շինուած խոշոր աւել մը կ'տեսնէր . այս ճարաշէն աւելը կ'գործածենք ձեղունները սարդերը վանելու : Երբ աղջիկս անոր շարժումը տեսնէր՝ վայնասուն կը հանէր և կ'պահուըտէր : Նախ աւելին քովը դայլ, անոր կոթը հանեցի և ձեռքս վրան քսեցի : Արդ՝ որպէս զի աղջիկս ալ յորդորեմ անոր մօտ երթալու , նարինջ մ'առի և աղջկանս քով դառնալով՝ խրատելակերպ կողմը գլորեցի . Իզուրաս նարինջին ետևէն վազելու թէև փոփաք կ'ցրցունէր , բայց աւելէն կ'վախնար և ինծի կ'նայէր ըսելով . «Գնա՛ ա՛ռ ։ » Ես դայլ առնելու նարինջը և նորէն աւելին կողմը գլորեցի : Դիտելով որ աղջիկս սիրտ չէր ըներ առաջ անցնելու , նորէն աւելն առի և անով նարինջը իմ առջևս քշեցի . Ի զորան այս երկու առարկաներուն միասին շարժիլը տեսնելով ընտանեկան իրեն վախ ազդող աւելին հետ և նարինջին ետևէն վազեց : Ահա այս կերպով կարելի է տղոց վախը փարատել , ինչ որ լինի ահռելի առարկան , թէ աղմուկ , թէ խոժոռ դէմք և թէ ակարկու իրեր , բաւական է որ քիչ քիչ այս բաներուն վարժ ընելու զանոնք փոյթ տանիք և մենք ալ վախ չ'յայտնենք :

---

# ԱԶԳԱՅԻՆ

—

## ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՄԸ ։

Եթէ Իզմիրի Հայն՝ որ նշանաւոր է ազգին մէջ իր առանդական ազատասիրութիւններովն ու ամուլ առատանութիւններովը՝ ուզէ օտարին առջև արդարանալու փորձ մը փորձել , յուսաջղիմական գործով մը պարծիլ , նայուածքն 'ի նանիր հոն հոս ժուռ ածելէն ետք , կը

պարտաւորի ամէնալ, և լոկ Աղքատասիրաց ընկերութեան նպատակ մը, ըսել. Ահա գործս։

Յառաջդիմութեան բաղմաձեղի ձեւերուն հետ համեմատելով թերևս ոմանց փանաքի երևի այս գործը, բայց մենք՝ խորհելով թէ ազգային լուսաւորութեան մասին կարող չեղանք տակաւին տեւական հիմնադրութիւն մ'ունենալ, նկատելով թէ՝ ժամացոյցի մը ճօճանակին պէս՝ մշանջենապէս կ'օրօրինք և կը տարուբերինք անձնական յոռի զգացումներու և փառն մնածումներու անձուկ շրջանին մէջ, իրաւունք ունինք փորը լինչ մխիթարուելու այս մարդասիրական ընկերութեամբ որ իր տեսակին մէջ եզական է հոս, ընկերութիւն մը որ քաղքիս ազգայիններուն քսան տարիէ 'ի վեր փորձած կիսատ և անկատար ձեռնարկութեանց քով յարատեւութիւն և արդիւնք ունի և որ տասը տարիէ 'ի վեր գթասիրութեան և բարեգործութեան օրինակ կընծայէ այնպիսի ատեն մ'ուր չենք զեղեալ ըսելու թէ Իզմիրի ամեն ազգային յետադէմ շարժումներուն ներքև մանաւոր շահ մը, անձնական կիրք մը կայ։

Տեղութիւն և արդիւնք, այս է ահա Աղքատասիրաց ընկերութեան պարծելու պատճառը։

Ի ընէ անտի հայերուն այս տեսակ ձեռնարկութեանց հետաքրքիր և ուշադիր ակնատեսը՝ հոս թերևս վայրկեան մը կանգ առնու և այս տեղութեան և արդիւնաւորութեան վրայ իրաւամբ զարմանալով հարցնէ մեզ՝ թէ ինչո՞ւ սոյն բարեբաղդութիւնը չունեցեր են միւս ամեն ընկերութիւններն որք ժամանակ առ ժամանակ Իզմիրի մէջ հաստատուած և առանց լուսաւորութեան զգալի հետք մը ձգելով կարենալու անհետացեր են։ Օրինաւոր հարցում, որու չենք վարանիր պատասխանելու, նախ նաև մենք ալ ամենուն ուղղելով մի և նոյն հարցումը։

Եւ ստուգիւ ո՞ւր են Սիւնեաց, Հաշտենից, Վասպուրականաց և այլն ընկերութիւնները. ո՞ւրքան տեւեցին անոնք, ինչ արդիւնք ունեցան։

Այս հարցմանց պատասխանելը դիւրին է եթէ մէն մի ընկերութեան նպատակը դիտուի։ Դիտէ՛ նպատակը, մի՛ մոռնար հային բարոյական անդամալուծութիւնը որ կ'արդիլէ զայն քայլելու և հասնելու այն նպատակին, և ահա այս ընկերութեանց կարճատեւութեան և յաբարբերական ամիսութեան պատճառներն ակներև կը տեսնուին։ Աղքատասիրաց ընկերութիւնը, ինչպէս իր անունէն ալ յայտնի է, իր դրօշակին վրայ գրած է աւետարանի պատգամ մը, այսինքն գթութիւնը։ Նպատակն է այս դրօշակին ներքև կուռիլ մարդուս

թշուառութեանց մէկ Ճիւղին դէմ, ընկերութեան՝ ստորին և մթին խաւերն իջնել, անոր և անօրնական հիւանդը դտնել և խնամել։ Այսպիսի կռիւի մը մէջ յաղթելու համար բաւական է առաքինի ըլլալ, բաւական է սիրել առանց կարմրելու, վասն զի առաքինութեան, Ճշմարիտ ընկերասիրութեան զէնքն է դթութիւնը, և դթութիւնը այժ և բոյժ կ'պարդևէ միայն նիւթապէս աղքատներուն և մարմնովին հիւանդներուն։

Ասով կը մեկնուի Աղքատասիրաց ընկերութեան տեսական և արդիւնաւոր էութիւնը։

Սիւնեաց, Հաշտենից և այլն ընկերութիւններն ալ մի և նոյն դրօշակին ներքև կուգէին կռուիլ, բայց տարբեր ասպարէզի մէջ, տարբեր թշնամիներու դէմ, և տարբեր զէնքով։

Ասպարէզն էր ոգիտութիւնը, թշնամիներն էին մարդուս սիրան ու միտքը, զէնքն էր լոյսը։

Այս ասպարէզին մէջ յաղթելը դժուարին է։ Սրտին մթութիւնը, այսինքն առեղութիւնը, մտքին մթութիւնը, այսինքն տգիտութիւնը, ասպերախտ թշնամիներ, անդիտակից հիւանդներ են, հիւանդներուն ամենէն հեստերն ու դիմադիրներն, և ասոնք իրենց դէմ անձնուիրաբար մաքառողին առջև սպառազէն կը կենան միշտ, և փոխանակ օրհնելու կը ջանան մերժելու կամ վիրաւորելու այն օդնական ձեռքը որ կը կարկառուի իրենց։

Կը մերժեն, կը վիրաւորեն, կը մեղչեն իսկ իրենց բարերարը հակառակորդը նաև վատութեամբ, նաև մատնութեամբ։

Դիմադրութիւն սրբապիղծ, ասպերախտութիւն անլսուր որ երբեմն կը յաջողի յաղթանակ ասանելու, յամենի և 'ի նախատինս մարդկութեան, թէև այսպիսի յաղթանակ մ'առօրեայ է, թէև աշխարհս լուսաւորութեան կը վերաբերի անդառնալի կերպով, թէև կը հաստատը թէ յառաջդիմութեան վայրկենական ընդհատում մ'է Ճշմարտութեան և լոյսին ստութեան և մթութեան առջև երբեմնակի ընկրկիլը։

Ահա ասով կը մեկնուի Սիւնեաց, Հաշտենից և տրիշ ասոնցնման ընկերութեանց վաղամեռ էութիւնն և դրեթէ ապարդիւնութիւնը։

Եկեղեցական երևելի հանճար մը, պատմութիւնը սահմանել ուզելով, ըսաւ· «Պատմութիւնը ոչ այլ ինչ է բայց եթէ մարդկային սեռի չարչարանաց երկայնաձիգ արձանագրութիւնը։»

Լամբնէին պէս եթէ մենք ալ Հայ ազգին ժամանակակից պատմութեան սահման մը տալ ուզենք, կը պարտաւորինք ըսել. «Աղդային պատմութիւնն ոչ այլ ինչ է բայց եթէ սոսկալի ապերախտութեան մը տեղեկագիրը...»

Այս ապերախտութեան արժանի չեղաւ Աղքատասիրաց ընկերութիւնը, բայց եթէ կը կարծէ ան թէ թշնամի չունի, կը սխալի։ Իր թշնամին անդգայութիւնն է։ Աղքատասիրաց ընկերութիւնն իր բարեգործական կոիւը շարունակել կարենալու համար զինակիցներու կարօտ է անընդհատ։ Կրնայ կասիլ և թշուառութեան դէմ կռուելէ դադրիլ, եթէ հայերը կասին և դադրին զդալէ և սիրելէ։

Ըսինք թէ անդգայութիւնն է իր թշնամին, և որովհետև անհնարին չէ այսպիսի ապերախտութեան մը հանդիպիլը, այսօր ահա վերդովելով վտանգի զանգակը կը զարնենք, ահաբեկ աղաղակ մը կարձակենք ամէն մարդասէրներու, ամէն զդայուն և դթոտ սիրտերու՝ ուշի ուշով քննելէն ետք ընկերութեան տարեկան տեղեկագիրը, ըստ ըստ իր դեղեցիկ սովորութեան այս տարի ալ հրատարակեց։

Եթէ անկողմնակալութիւնը պարտ կը դնէ մեր վրայ շնորհաւորել ընկերութեան բարեսէր և փութաջան անդամները, յիրաւի մի և նոյն չափով չենք կրնար շնորհաւորել մեր կրօնակիցները որոնց պարտքն է իրենց նուէրներով թէ ու թիկունք ըլլալ ընկերութեան։

Մեղի վախ ու վրդովում տուող կէտն է նուէրներուն քանակութիւնն որ այս տարի ըստ տեղեկագրին 13332 դահեկանի կը հասնի։ Քիչ է այս։

Երբ կը խորհինք թէ մենք ամենքս ալ մի և նոյն ընտանիքի մը անդամները կը կազմենք, թէ ասոնց մէջ եթէ կան ակաւաթիւ երջանիկներ, մեծագոյն մասն ապերջանիկներու դասուն կը վերաբերին, կը պարտաւորինք առատաձեռնութեամբ կատարել մեր տնանկին ողորմելու պարտքը։ Ողորմիլն առաքինութիւններու առաջինն է, և սարդս չկրնար հրաժեշտ տալ այս առաքինութեան առանց նուաստանալու, առանց տուժելու իսկ, վասն զի ամենքս ալ համերաշխութիւն ունինք ընկերական աշխարհի մէջ։ Հարկ է ուրեմն այս սրբարան պարտքը կատարել պահանջուած զոհողութեանց համեմատութեամբ։

Սակայն Աղքատասիրաց ընկերութեան տարեկան գործողութեանց

խորվինքը մեծ և վատաւոր կերևի մեզ։ Կրնանք առանց չափազանցութեան հաստատել մեր ըսածը, նուիրատուներուն ուշադրութիւնը հրաւիրելով տարեկան տեղեկագրին վրայ, ուսկէ կիմանանք թէ ազգային հիւանդանոցէն դուրս ընկերութիւնը 1306 թեթև կամ ծանր հիւանդներու օգնած և խնամք տարած է։ Այս հիւանդերուն պաշտօնը միայն մեռեր է։ Այս թիւն ընկերութեան անձնուէր ջանիցն ու արդիւնաւորութեան այնպիսի անժխտելի ապացոյց մ'է որ այս մասին ուրիշ վատա և ապացոյց բնաւելը աւելորդ կ'սեպենք։

Քանի որ հիւանդները կը վերաբերին ժողովրդեան այն դասին ուր աղքատութիւնը և թշուառութիւնը հեռագեռ կը հաշմեն և կը հիւծեն կազմութիւնները, և ուր մէն մի հիւանդ դոյգես ապականակիր և թունաւոր մթնոլորտի մը մէջ կը շնչէ, ընկերութիւնն իրաւունք ունի պարծելու և պահանջելու որ շնորհակալ ըլլանք։ Բայց տեղն է ըսելու թէ նաև Տօքթօր Ճ. Մարկոսոֆ, հայ բժիշկը, որ հմուտ և դիտուն երիտասարդ մ'է, ոչ նուազ իրաւունք ունի պարծելու և շնորհակալութիւն պահանջելու, և տարակոյս չունինք թէ ինչպէս ընկերութիւնը հարկաւ շնորհակալ է անորմէ, նաև Իզմիրի հայերը շնորհակալ պիտի ըլլան Հիբօղրատի հայ աշակերտէն։

Նոյն տեղեկագրէն կիմանանք նաև թէ այս տարի ազգային հիւանդանոցը 278 հիւանդ ընդուներ է որոնց 249ը միայն առողջացեր, 24ը մեռեր են, իսկ 54ը տակաւին կը խնամուին մնացուցեալ տարբերութեան մը համար։ Այսքան սակաւաթիւ հիւանդներու մէջ քանանչորսին մեռնիլն 'ի սկզբան մեր զարմանքը գրաւեց, վասն զի Աղքատասիրաց ընկերութեան հիւանդներուն և ազգային հիւանդանոցը մնոնլներուն մէջ ահագին տարբերութիւն մը կերևայ մեռնողներուն թուոյն նկատմամբ։ Ուզեցինք ասոր պատճառը հասկնալ, և իրօք՝ մեր առած տեղեկութեանց շնորհիւ՝ կրցանք հասկնալ այս առերոյթ տարբերութեան պատճառը։ Նախ անդիմադրելի դժկամութիւն մը հիւանդանոցէն կը հեռացնէ կարօտաբեկ հիւանդները, և այս դժկամութիւնն ալ չկրնար մեղադրուիլ երբ կը խորհինք թէ ի՞նչ անհուն տարբերութիւն կայ իրապէս բարեկարգ հիւանդանոցի մ'և մերինին մէջ։ Այս վերջինին մէջ խնամուելու յանձնառու կրլլան ընդհանրապէս այն անձինք որք բոլորովին անոր և անօգնական են, նաև հիւանդութեան բեռին ներքև ճնշուած և ջախջախուած։ Իզմիր ոչ այնքան կը հայթայթէ հիւան-

դանոցին այս կարգի հիւանդներ՝ որքան Մենեմէն, Մանիսա, Գու�-սա, Այտըն և ուրիշ մօտակայ քաղաքներ ուր այն թշուառներն առողջութիւն գտնելու յոյսով իրենց կարողութեան սահմանին չափ ամեն ջանք 'ի գործ դնելէն ետք, փրկութեան ամեն միջոցներու դիմելէն ետք, վշտանալէ, տառապելէ, բիւր նեղութիւն և տաղնտապ կրելէ ետք՝ Իզմիր կը փոխադրուին բոլորովին քայքայուն առողջութեամբ մ'և կ'ստիպուին հիւանդանոց մնալու հարկաւ չէ թէ ապաքինութիւն գտնելու այլ անմիջապէս իրենց վերջին շունչը առնելու համար։

Հետևաբար այսպիսի հիւանդներու կարգին վերաբերող 278 անձանց միայն 24ին մեռնիլն և միւսներուն առողջանալը յիրաւի պատիւ և պարծանք կ'բերէ մեր Հայկազուն բժիշկ Տօքթօր Շ. Մարկոսոֆին որ Յունիսէ կը ծառայէ հիւանդանոցին։

Զրկանքէ ընթանք և հոս մեր յօդուածին վերջ տալէ առաջ՝ կուզենք քանի մը խօսք ևս ուղղել Իզմիրի Հայ հասարակութեան՝ որուն պարտքն է փոխադարձաբար խրախուսել և քաջալերել թէ՛ յիշեալ բժիշկը և թէ նաև ուրիշ Հայկազն երիտասարդ հմուտ բժիշկներ, Տօքթօր Պողոս Կոստանդեանն և Տօքթօր Թ. Վարդանեանը։ Իզմիրի Հայերը կը կատարեն արդեօք այս պարտքը։ Կ'ստիպուինք դրեթէ բացասական կերպով պատասխանելու այս հարցումն։ Անոնց այս ընթացքը ստուգիւ մեղադրելի է, վասն զի, ուրիշ բան մը չգործածելու համար, կըսենք թէ յանցանք մ'է այն։ Յանցանք մ'է, նախ՝ վասն զի այս անտարբերութեան հետևութիւնն է վհատել այն ամեն երիտասարդները որք իրենց կեանքը և քսակը կը մաշեն Եւրոպայի մէջ դիտութիւն սորվելու և ազգին ընտրելագոյն անդամները կազմելու, ծառայելու և փոխադարձաբար խրախուսուելու համար։ Հայերուն առանդական սովորութիւնն է օտարին ետևէն երթալ, օտարին քսակը պարարել, օտարին վրայ հոգի տալ։ Այսօր կրեթէ ամեն հայ ընտանեաց բժիշկները յոյն են։ Զգիտենք թէ ի՞նչ է այս նախամեծարութեան պատճառը, քանի որ մեր հայ բժիշկները դիտութեան և հմտութեան մասին անոնցմէ ետ չեն մնար, քանի որ կը համարձակինք ըսելու թէ անոնցմէ աւելի քաջահմուտ և վարժ են իրենց արհեստին մէջ։

ԳՐ. ՁԻԼԻԿԻՐԵԱՆ

## ՊԱՏՄԱԿԱՆ

—

## ԲՐԻՏԱՆԻԱ

Վիլյեմ Յաղթողին մահէն ետքը՝ անդրանիկ որդին Ռոպերդ՝ ա-բիսպիրտ և ասպետական իշխան մը՝ Նորմանտիան կ'ժառանգէ. յետոյ խաչի զինուոր գրուիլ ուզելով՝ իր բոնասէր և ուիշտ եղբօրը՝ Վիլյեմ Ռուֆուս (աշկէտ) որ Անգլիոյ գահն ելեր էր, կ'ծախէ իր երկիրը։ Իսկ Յաղթողին երրորդ որդին՝ Հենրի՝ Վիլյեմ Ռուֆուսի նեռահար մեռնելովը Անգլիոյ թագը կ'գրաւէ և սաքսոնեան արքունի յեռին գերդաստանէն Էսկար Էթելնի եղբօր աղջիկը՝ Մաթիլդին հետ կ'ամուսնանայ։ Ռոպերդ՝ Սրևելքին ձեռնուձայն դառնալով՝ Նորմանտիան կ'պահանջէ։ Հենրի՝ որ արդէն իր գահին վրայ ամրացեր էր՝ Ռոպերդը կ'բռնէ և ցմահ, այս է 29 տարի Բարտիֆ դղեակը կ'բանտարկէ։ Հենրի՝ Հռոմի պապերուն պահանջմանց դէմ կենալու առաջին փորձ կ'փորձէ և կղերի պաշտօնատուութեան (investiture) իրաւանց մասին երկար ատեն վէճ մը գրգռելէն ետև՝ միջին ճամբով մը կ'լուծէ։ Մէկ հատիկ արու զաւակը կ'մեռնի և իր Մաթիլդ աղջիկը Գերմանիոյ Հենրի. Եին հետ կ'կարգէ։ Մաթիլդ՝ որբևարի մնալով և անզաւակ՝ նորէն կ'կարգուի Անժուի կոմս՝ Բլանդէժնէտ Ժէոֆֆրէյի հետ՝ որմէ որդի մը կ'ունենայ։

Հենրի մեռնելով՝ իր աէրութիւնը Մաթիլդ աղջկան կ'թողու։ Բայց Վիլյեմ Յաղթողին Ստեղա աղջկան որդին Ստեֆան՝ իսկոյն Անգլիա կ'փութայ, արքունի գանձը կ'գրաւէ և թագաւոր կ'պսակուի։ Ահա այն ատեն երկու հետամուտներու, այս է Մաթիլդի որդի Հենրիի և Ստեֆանի պատճառաւ քաղաքական պատերազմ մ'է կը փրթի և քսան տարի կ'տևէ։ Արքունի զօրութիւնը կ'ակարի, մեծ պարոնները իրենց անկախութիւնն և պապական կղերն իր ազդեցութիւնը ձեռք ձգելու կ'նկրտին։ Ի վերջէ երկու կողմ ալ կ'հաշտուին սա դաշամբ որ Ստեֆան թագաւորէ ցմահ և անոր յաջորդէ Մաթիլդի որդին Հենրի։

ԲԼԱՆԴԷԺՆԷԳ. Այսպէս Բլանդէժնէգի նշանաւոր հարստութիւնը կ'սկսի յԱնգլիա 1154ին, Հենրի Բ-ին գահակալութեամբը, որ իր հօրը կողմէն կ'ժառանգէր նաև Անժու, Մէն և Դուրէն գաւառները, և ֆրանսայի արևմտեան կողմն արդէն ունեցած երկիրները կ'ընդարձակէր։ Իսկ ֆրանսայի Լուի Եէ թողած Էլէոնոր կնկան հետ ամուսնանալով՝ անոր Կիէնի և Բուաղուի հողերն ալ ձեռք կ'ձգէր,

և ասով կռիւը երկու դրացի թագերու մէջ անսպասելի կ'լլնէր։

Հէնրի՝ արիասիրտ, լուսամիտ, ժիր, ազդու և Ֆրանսայի թագաւորին հզօր մէկ ոսոխն էր։ Աւատական դրութեան մեծ հարուածը կ'տայ, կղերական իրաւասութիւնը կ'սեղմէ։ Փոխանակ անձնական ծառայութեան ամէն տոպէտի հողի վրայ հարկ կ'դնէ (scutage) որմէ առաջ ամէնքը ղերծ էին, և այս հարկերէն գոյացած արդիւնքով թոշակաւոր սաքսօն բանակ մը կ'կազմէ որպէս զի ազնուականաց գլուխ չծռէ։ Նոյնպէս կ'հաստատէ Սահմանք Քլարէնտոնի (1164) ըսուած կարգադրութիւնը, որուն նպատակն էր՝ Պապին իշխանութիւնը սահմանել, առանց արքունի հաւանութեան անոր կնդակն ու բանադրանքը չգործադրել, կղերին իրաւասութիւնը լոկ կրօնական իրերու մէջ ամփոփել և անոր քաղաքական յանցանաց դատաստանը տէրութեան ատեաններու ենթարկել։ Այս սահմանաց դէմ կ'կանգնի Թոմաս Պէքէդ՝ Քէնթրպէրիի սքրեպիսկոպոսը, որ իր սրբակրօն վարքուց համար մեծ հռչակ և յարգ ունէր ժողովրդեան մէջ, և թագաւորը բանադրելով՝ դատաստանէ խոյս կ'տայ։ Թէև պապին միջնորդութեամբը նորէն կ'հաշտուի, սակայն նոր օրինաց յարող եկեղեցականները խստիւ պատժելով՝ տէրութեան մէջ աղմուկ և շփոթ յարուցանելուն՝ թագաւորին մէկ անուղղակի ակնարկութեան վրայ՝ քանի մ'ասպետներ կ'երթան Պէքէդը մայր եկեղեցւոյ խորանին առջև կ'սպանեն։ Այս սպանութեան վրայ ժողովուրդը ապստիկ կ'զայրանայ և պապականութիւնը յաղթանակ կ'տանի, վասն զի Քլարէնտոնի Սահմանք կ'դադրին և Թոմաս Պէքէդ սրբոց կարգը կ'անցնի։

Հէնրի Բ Ֆրանսայէն դառնալուն Իրլանտա* կ'արշաւէ և լոկ ան-

---

* Իրլանտայի բնիկ ժողովուրդը՝ Բրիտանիայէն գաղթող Կելտացիք էին։ Այս երկիրը մանր մունր անկախ տէրութիւններու բաժնուած էր։ Մշտատև կռիւ, աւարառութիւն, սպանութիւններ սովորական դէպքերն էին։ Աւրիան Դ. Պապն՝ Իրլանտան՝ իբր եկեղեցւոյ կալուած՝ Անգլիոյ Հէնրի թագաւորին բաշխեց՝ որպէս զի անոր հետ և խռովայոյզ բնակիչները զսպէ։ Իրլանտայի Լինոգր դատարանն թագաւորը Տերմոդ Մաք Մուրրօ՝ Պրէֆնէի իշխան՝ Բուարկի կինը կ'առնէնդէ։ Բուարկ Քոնոքիի թագաւորին օգնութեան կ'դիմէ՝ որ ուրիշ դատական թագաւորներու հետ միանալով՝ Տերմոդն կ'յաղթէ և զանի Իրլանտայէն կ'արտաքսէ։ Տերմոդ՝ Անգլոյ Հէնրի թագաւորէն զօրք կ'ուզէ որ իր երկիրը մտնէ։ Թագաւորին հրամանին վրայ՝ Բէնպրօքի դուքս Ռիչարտ՝ ոչ զօրաւոր անուանեալը, քանի մը բաղդախնդիր ազնուականաց գլուխն անցնելով՝ Իրլանտա կ'ասպատակէ և ընակչաց սարսափ կ'ազդէ։ Ալ երթալն Հէնրի ալ Իրլանտա կ'անցնի և իբր վերապետ կ'ընդունուի։ Սակայն այս տիրապետութիւնը անուանական էր, վասն զի շատ դարեր անցնելէն ետև՝ հազիւ այս երկրին երեսէն միացած կ'սեպուի Անգլիոյ։

ռամբ անոր կ'տիրապետէ. վասն զի՝ միջին դարուն՝ մինակ Տուպ-
լին և քանի մը շրջակայ քաղաքներ Անկլիոյ կ'հպատակին։ Այն
հէք երկիրն անդադար արիւնահեղ պատերազմներու ասպարէզ կը
դառնայ։ Բնիկ պետեր՝ թագաւորի անուամբ՝ իրարու հետ և անկ-
լիացի ասպատակներու դէմ կ'մաքառին և երկիրն աւերակ կ'դարձնեն։
Միջին դարու մէջ Իրլանտայի պատմութիւնը ասպետական դիպ-
ուածներով լի է։ Ժողովուրդն անդուս, ստրուկ՝ մեծատունին և կը-
ղերին լծին ներքև կ'հեծէ։

Հէնրի՝ արտաքին պատերազմներէն զատ՝ իր որդւոյ դէմ ալ
կռուելու ստիպուեցաւ, որոնք՝ իրենց մօր՝ Էլէոնոր թագուհւոյն և
Ֆրանսայի թագաւորին դրդռութեամբը գլուխ քաշեր էին։

## ԲԱՆԱՀԻՍԱԿԱՆ

—

### ԳՈՒՔԱԼՕ*

Սակայն առանց խօսքերնէս շատ հեռանալու,
Եւ Սենոյի** նման կըրկից վրայ Ճառելու,
Եւ բաժնելով դաս դաս զատ զատ անուններով՝
Վէճերը տալու ոտանաւոր գլուխներով,
Թողնենք որ վրան խօսին Ժողոմէ ու Կղէվզօ,
Եւ լաւագոյն կողմէն դիտենք մարդն 'ի մօտոյ։
Նա միայն ապրող քաղաքի մէջ, կ'ըսեն, հեշտեաւ,
Քաղաքային բաներ ցուցունէ, սովորոյթը լաւ,
Դատաւորներ կարդէ, գրնէ նաև արքայ,
Կարգ և կանոն պահէ, հսկէ օրինաց վրայ։
— Իրաւ է, բայց առանց կարգի, օրէնքներու,
Ոստիկանէ կամ զինուորէ վախ կրելու,
Տեսնենք մի ղող զայլեր մեղի նման անդուլթ՝
Կողոպտելու դայլք՝ յարահեսլս հետամուտ։
Ճոխանալու համար վարդը՝ մոլեղնասէս

*(Տես Թիւ 4)։

**Սենոյ՝ Օրատոսաբ կոչուած կրօնական միաբանութեան մը գլուխ՝ «Վատրաւն Կրէց» անուանով վերջը մը յօրինած է։

Զ.Հիրքանիա* կը պառակտէ՞ օձտամամբ պէս պէս։
Անտառին մէջ արջն արջին հետ մարտ կը մղէ՞,
Անդղեն օդին մէջ ուրիշ անդղ կը պատառէ՞։
Ափրիկէի դաշտերուն մէջ տեսած է ոմ
Որ տէրութիւնն իրենց աւեր դարձուցեալով,
Առիւծք զառիւծս, և ազգականք ալ զազգական
Հալածեն սակս բռնաւորի մը ընտրութեան։
Բնութեան մէջ կենդանեայ սէգըն ամենէն
Յարգէ ուրիշ կենդանւոյ վրայ պատկերն երեն,
Իր կատղութեան դնէ սահման անոր նկատմամբ,
Առանց դատի, կռուի, կապի, կեայ հանգստեամբ։
Ժառանգութեան համար արծիւ մը մէկ դաշտի՝
Ուրիշ արծիւ մը չ'կանչեր բնաւ դատի։
Աղուէս մ'ուրիշ աղուէսէ հաւ մ'առ 'ի կորզել՝
Թօլէ** մարդուն չ'երթար երբէք դատը յանձնել։
Խնդրագիրեր, աղերս, բողոք չկան անոնց մէջ.
Ո՛չ ստորին խորհրդարան և ոչ իսկ մեծ։
Ամէն մէկը վստահութեամբ փոփոխակի՝
Ուղղութեան պարզ, զուտ օրէնքին ներքև կ'ապրի։
Մարդը՛ս միայն, միայն մարդը սեպէ պարծանք
Իր կատղութեան վերցնել իր անձին կեանք։
Քի՛չ է՛ր որ ձեռքն աւաջնորդուած 'ի դժոխոց,
Երկաթ սրէր, վառօդ շինէր կրակ ու բոց,
Մոլեգնութիւնն իր աշխարհի աղետաբեր՝
Օրինագիրք մ'իսկ Լատին մութ*** մրռաեալ պէտք էր,
Վարպետք վնտռել, նոր լայք զայն ևս 'ի ճապաղել,
Արդարութիւնն օրէնսդիտաց դէզով ճնշել,
Եւ 'ի ըստմն չարեաց՝ Գաղղիոյ մէջ մնցունել
Փաստաբանից արդի ճառերն. բաւիղ անել։
Գոյն ինչ մեղմ'ով, պիտի ըսես, մի՛ նեղանար.

---

* Պարսկաստանի նահանգ, Կասպից ծովուն հարաւային կողմը։
**Թօլէ խորհրդարանի մէջ փոխանորդութիւն վարող մէկն էր, սաստիկ նշանակուած։
***Digeste։ 533 թուականին՝ Յուստինոս կայսեր հրամանաւ եղած՝ Լատին օրէնսդէտներու դատաստանական վճռոց հաւաքումը։ Այս վճիռները երեք միլիոնի կ'ելլէին և 2000 հատոր կը կազմէին։ Հին ժամանակ ֆիրանսայի մէկ գրանի գաւառներու մէջ այս օրինագիրքս կը գործածուէր։

Պէս պէս կրից դերի է մարդս , չեմ ուրանար ։
Ծովու նման ալիքն ունի ։ բայց ամենէն
Փոքր լաւութիւնք՝ մեծ մեղութեանցը տեղ բռնեն ։
Վերջապէս մարդս չէ՞ մի որու Ճշգրիտ կարկին ,
Իրեն յանդուգն վեհ արուեստով չափէ ղերկին ։
Տգիտութեամբ խորունկ ամէն բան կշռելով ,
Խուզէ բնութիւն , անոր գաղտնիք թափանցելով ։
Կենդանիներն ունին միթէ լսարաներ ,
Ծաղկեցուցած վարժապետաց քառեակ դասեր* ։
Իրենց մէջը բժշկութեան , իրաւունքի
Վարպետք տեսնո՞նք հաղնին աքիս կամ ծիրանի ։
— Ո՛հ , ո՛չ անշուշտ ։ և ո՛չ բժիշկ մը իրենց մէջ
Մարդախոշոշ իր արուեստով զանտառս թռունեց ։
Վարժապետ մի , զինեալ փաստով ինչ սնոտի
Իրենց մէջ ձայնն չ'կորսնցուց 'ի դպրոցի ։
Այլ չերթալով խորերն թէ մեր միտքը չնչին
Բան մի գիտէ՞ և կամ գիտցած է բնաւին ։
Դու ինքդ ինձի պատասխան տո՛ւր ։ Զմարդ արդեօք
Այս մեր դարու մէջ գիտութեա՞ն չափեն վրայօք ։
Կ'ուզե՞ս մի որ քու դուռդ վազեն բոլոր մեծեր ,
Կ'ըսէ մի հայր որդւոյն , մօրուքն չ'բուսած դեռ ,
Աղէկ գործ մի բռնէ՛ և թո՛ղ գրքերն մէկ դի ։
Հեղին մէկով , ըսէ՛ , հարիւրն բերէ քանի՛ ։
— Բան ։** — Ո՛հ , ապրիս ։ Ալ պէտք եղածն դուն քաջ
Ի՛նչ պատիւներ և ո՛րքան դանձ պիտի դան քեզ ։ [գիտես ։

---

*Les quatre Facultés ։

**Հոս վաշխառու մըն է որ կը խօսի , և որ փոխանակ բրանի մէկ տոկոսի վրայ հարցունելու , որն որ հարիւրին հինգ կ'ընէ , ու Եւրոպայի ընթացքին սովորական տոկոսն է , հինգի մէկ տոկոսի վրայ կը հարցունէ , որ հարիւրին քսան ըսել է , ու Եւրոպայի համար չտեսնուած ու անառնալի շահ մ'է ։ Մեր Տաճաստանի համար , ուր հասարակաց հարստութիւնը անտեսական պատճառներով նուազած և նուազելու վրայ է , ստակի պակասութեան համար անցած սովորական և օրինաւոր սեղուած տոկոսը 0/0 10-12 է ։ Այս հինգն վրայ մեր վաշխառուն 0/0 40-48 առնուլ սորվեցնել պէտք էր ։ Թէև ներսի գաւառները , ինչպէս հաւաստեաւ կը պատմեն , ասոր մօտ և այս համեմատութեամբ իսկ գոյն ունի տոկոսներ կ'առնուին շատ անդամ խեղճ և աղքատիկ երկրագործներէ . . . . ։

Լաւ վարժուէ՛, զաւակդ իմ, բարձր այս դիտութեան,
Թո՛ղ Պղատոն . առ առաջնորդ մ՝Եղմոսական*,
Ո՛ր նահանգին դիտցի՛ր գնել տուրքն արժան է,
Թէ աղն տարին առ թագաւոր քանի բերէ ։
Կարծրացո՛ւր սիրտդ . եղիր կծծի , անգութ և գող .
Բուռն , անիրաւ , կեղծ , անպատիւ , անխիղճ, նենգող,
Առատասիրտ չ՝ըլլա՛ս բնաւ , անմտի պէս ։
Թշուառներու լաւ լաւ հիւթովք քեզ պարարեա ։
Եւ խաբելով խոհեմութիւնն լուրջ Քոպերի** ,
Անզթութեամբք արժանանաս հարուստ բաղդի ։
Պիտի սեմնես իսկոյն պուէտ , առեղնախօս ,
Ճարտարաբան , աստեղագէտ , դրամատիկոս ,
Դիւցազուններն վար առնելով՝ զքեզ կանգնել ,
Ուղերձներնին պերճ տիտղոսօք քու լեցնել ,
Քեզ լատին , յոյն , Եբրայեցի լեզուովք յայտնել
Թէ արուեստնուն խորքն ու ծուծն ես թափանցել ։
Ո՛վ հարուստ է՝ ամէն բան է ։ Իմաստուն միշտ՝
Բան չդիտցած՝ ամենայն ինչ դիտէ և ճի՛շդ ։
Նա սի՛րտ ունի , միտք , արժանիք , տաղանդ , պատիւ ,
Ընտիր ձիերեր , վեհ յատկութիւնք , արիւն ազնիւ» ։
Վաշխառու մի վարպետ՝ որդւոյն այսպէս ահա
Հարստութեան նշանակէ հեշտ պողոտայ .
Եւ յաջողի ստէպ նա՝ որ դիտէ միայն սա՝
Զորս և հինգ՝ ինն , երկուքն հանէ՝ եօթն մընայ ։
Դո՛ւն , վարդապետ , Աստուածաշունչն խառնէ՛, դատո՛ւր ,
Այն սոսկալի ծովուն խութերն մէկ մէկ ցուցո՛ւր ,
Այն վսեմ դրքին սուրբ երկիւղին մէջէն ուսիր
Բա՛ց , և Կալվինն պասպանձեցո՛ւր նաև Լուտեր ,
Հին դարերու նշանաւոր վէճերն մեկնէ՛,
Ռաբբիներու*** մութ գրուածներն լուսաբանէ ,
Զի ծերութեանդ մէջ կաշեկալմ՝ մի հոծ հատոր՝
Նուէր ընես մեծատունի մը անվիքոր ,

---

*Գիրք մ՝որ Եղմոսից վերաբերեալ ամէն բաներու վրայ կը խօսէր ։
**Տերութեան պաշտօնեայ ու քարտուղար ընդհ . Տեսուչ Եղմոսից ։
***Եբրայական Բոդդէ բառէն եղած , Հրէական օրէնքին ներհուն , վարդապետ ։

Որ իբր վարձ Աստուածաշունչ Գրոց մեկնութեան՝
Զոր «Հնորհակալ եմ» մ՚ըսէ քեզ խիստ սրտուռական։
Կամ մեծագոյն թէ սիրաց ըղձայ պատիւներու՝
Թո՛ղ զՍորպոն, թո՛ղ աստիճանդ, թո՛ղ դասերը քու։
Եւ գտնելով գործ մի, պաշտօն մի շահաբեր,
Սեղմնաւոր մի կամ նօսար քեզ ընտրէ՛ տէր։
Թո՛ղ տուրք Թովմասն որ հաշտուի Աքօղի հետ*,
Եւ յարմարէ թէ ոչ այլ ինչ մի վարդապետ՝
Բայց թէ անմիտ։ —Անմի՞տ, պուէտ, խօսէ՛ դու վրաց,
Պիտի գոչե՞ս, մուսայդ հեռա՛ւն մղել է ապ։
Եւ ժամանակ չ՚անցուցանելով բանիւք մտասի,
Գործին եկո՛ւր, զրուցէ մարդս բան խելք չ՚ունի։
Այն անխարդախ չէ՞ առաջնորդ, և վառ իր ջահ։
—Այո՛, այլ ի՛նչ օգուտ որ ձայնն լռէ նորա,
Եթէ հոգմոց վրայ վստահած՝ նա Ճամբորդէ
Եւ ժայռ և խութ չ՚ըլայ որու զէմ չպարնէ։
Եւ ի՛նչ օգուտ բանն Քօդէնի** որ կը գոչէ.
«Ա՛լ մի գրեր, առողջացի՛ր այդ բուռն ախտէ»։
Թէ խորհուրդներն այս օ՛չ միայն չգտպեն զան՝
Այլ յանդելու հիւանդութիւնն մնունդ իսկ տան։
Բարձրը ձայնով կարդալով տունն իր քերթուածներ,
Նա փախչումնէ ցանդ ազգական, դրացի, ընկեր։
Քանզի մէյ մ՚որ փորը մանէ իր սատակայ՝
Ամէնք փախուստ տալ պատրաստ են, մինչև ծառայ։
Եշ մը գտնէ՝ հրահանգուած ընութեանէ՝
Հեռևի լուռ բնաղդումն՝ որ գլինք վարէ.
Անտառին մէջ չ՚երթա՛ր ձայնովն իր անսիտան
Թռչնոց երգոց հետ մտնելու նանիր մրցման։
Թէև սնրան՝ իր սրդոտայն կը քալէ նա։
Սոսկ բանաւոր մարդս լոյս ատեն բան չտեսնայ,

---

*Թովմասեանց և Աքօղեանց վէճերը հռչակաւոր են աստուածաբանութեան մէջ։ Ցովհ. Տրնս, ռամկօրէն Սէօղ կոչուած, վասն զի Ակոմոնացի էր. իր կարծիքները սոսկ ներհակ են Սբ. Թովմասին։

**Հարլ Քօդէն, ճեմարանի անդամ, Բարեց Ծնած։ Կինայ ըսուիլ որ իր հրաչակը Պուալօի կը պարտաւորի, որ իր երգիծաբանութեանցը մէջ շատ անդամ նշանակած է զանի չարաչար։

Խորհրդով իսկ բանին՝ ամեն ինչ կ՚լնի թիւր
Ո՛չ խելք , ո՛չ միտք կը ցուցանէ գործոց մէջ իւր*
Ամենայն ինչ յիւր աչս ե՛ւ հեշտ ե՛ւ դժուարի ,
Ե՛ւ լաւ , ե՛ւ դէշ ։ Ուրախ , տրտում՝ պատճառ չ՚ունի ։
Ըստ դիպոյ միտքն սիրէ , խոյս տայ կամ հալածէ ,
Շինէ , աւրէ , գնէ , հանէ , կանգնէ , քանդէ ։
Ինքը իրեն պէս յուվաշն ու արջ տեսնուած է
Վախնալ զողալ իրենց յիմար ցնորներէ ,
Տանջուելիք անզոյգ թիւին երկիւղ կրելէ՝ ,
Զամ թէ օդին մէջ սպառնոյ ապուռն կարծելէ ։
Խօսէ՝ , զանբան կենդանին մարդ ե՞րբ է տեսել
Զոհ նուիրել մարդուն , անոր կուռքը պաշտել ։
Դիմել իրեն իբր Աստուած երկնակաց
Պայծառ , բարուք օդեր խնդրել ծունկը կրկնած ։
Այլ կենդանին հազար անգամ զմարդ տեսած՝
Պաշտել մեռաղն նոյն իրեն հարեցուցած ։
Երկրի մը մէջ անհկանացուք տեսած է նա
Դուզալ կապիկն փառօք բազմած խորանուն վրայ ։
Եւ Նեղոսի ափունքն անմիտ ժողովուրդներ
Խնկամաններ ձեռքը՝ փնտռել կոկոդրիլներ ։
—Բայց պիտ՚ ըսես , էր օրինակդ այդ դարշ ղաղիր ։
Ինչ ծառայեն հոս Եգիպտոս ու դիքն նանիր ։
Ինչ , հաստատե՞ս պիտի անտուրբ այդ խօսքերով՝
Թէ վարդապետ մի , մարդ , ստորին է էշին քով ։
Էշ մը ծանակ , խաղք , կենդանեաց դասուն բոլոր ։
Կենդանի մը պանդուր , ապուշ , թշուառ , և որ
Սոսկ իր անուան մէջ երկիւղանք պարունակէ ։
—Այո՛ , եւ էշն ինչո՞ւ մերին ծիծաղ շարժէ ։
Զինք կը ծաղրենք , սակայն օր մը թէ կարենար
Մեր յանցանքներն , քա՛ջ վարդապետ , դատել ինքն ալ ։
Զմեզ ուղղելու համար՝ Երկինք թէ իմաստուն՝
Հուսկ խօսելու շնորհէր անոր կարողութիւն ։

---

*Եւրոպայի մէջ ընդհանրացած նախապաշարում մի կայ թէ ասան և երբէք հոգի սեղան նստիլը ևն աղէտք կամ մահ յառաջ կը բերէ ։ Արևելքի մէջ այս նախապաշարումը անծանօթ է ։

Թէ բարձրաձայն ըսէր ի՞նչ որ մեղմով խօսուի ։
Խոստովանանք. մինայ՝ ինչե՛ր չ՚ըսեր պիտի ։
Եւ ի՞նչ արդեօք կ՚անցնի մտքէն երբ Բարիզի
Մէկ փողոցին վրայ ուշադիր աչօք հայի ։
Տեսնէ չորս կողմ մարդիկ հաղած դոյներ ներհակ ,
Մին դորշ , մին սև , այլք անհեթեթ պճնեալք համակ ։
Ի՞նչ կըսէ երբ մարդասպան մի զմահ ետին
Հաղած՝ տեսնէ վաղել ձիով իր հիւանդին ։
Կամ երբ դտնէ իմաստակաց մի մեծ ժողով ,
Լսարանի մեծաւորն ալ իր մարդերով* ։
Կամ թէ տեսնէ արդարութիւնն մեծ բաղմութեամբ ,
Որ տանի մարդ մի սպանանէ պատրաստութեամբ ։
Ի՞նչ մտածէ մեր վրայ եթէ մէկ հինդշաբթի՝
Կէսօր ատեն դիպուածն ատեան զինքը տանի ։
Երբ հեռուէն լսէ , բերնով դժոխային ,
Խարէութեան** ուժգին մունչերն ի մեծ սրահին ։
Ի՞նչ կ՚ըսէ երբ իրաւադէտ , վարդապետ ,
Տեսնէ դպիր , և փոխանորդ և դատաւոր ։
Ո՛հ , թէ յայնժամ այն մարդատեաց թշուառ իշուն
Եղուլոսի ատենին պէս բացուէր լեզուն ,
Ամէն կողմէ զմարդ յիմար , խենդ տեսնելով՝
Աննախատինք եմ, պիտի ըսէր բոլոր սրտով ,
Օրորելով գլուխն , և զոհ իր տատասկէն ,
«Մարդն մեր քով անմիտ անբան մ՚է ապաքէն ։»

---

*Հեղինակը ակնարկութիւն կ՚ընէ Համալսարանի թափօրի հանդէսներուն , որոց գլուխ կը կենար Համալսարանի մեծաւորը առջևէն գաւազանակիր սպասաւորները ձգած , և Բուեէն՝ արուեստից , բժշկութեան , իրաւագիտութեան և Աստուածաբանութեան յատկացած վարժապետաց-խուռները ։

**Chicane ։

# ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԻՒՆ

—

Աշխարհիս մէջ բնութեան պատուհասներն անբաւ են, անբաւ են անոնց գործած կոտորածն ու չարիքը. ջրհեղեղ, գետնաշարժ, փոթորիկ, երաշտութիւն, սով, հրդեհ, տեսակ տեսակ ժանտախտ, մոլութիւն, մարտ ու դոռ ուր ուրեմն մարդկան ահ ու մահ կ'պատճառեն և իմաստասիրին կորովաբիր ու հետաղնին աչքը կ'մռայլեն, սակայն եթէ քաղաքական ու բարոյական կարգի չարիքն բնութեան չարեաց հետ համեմատենք կշռին նժարն առաջնոց կողմը հակեալ պիտի տեսնենք։

Հիներն՝ Արհմն ըսին՝ և այս ահռելի խնդրոյն լուծումը տրուած կարծեցին, հայրապետներն՝ արքայութիւն կայ ըսին և վերջին դատաստանին սպասեցին, նորերն՝ դիտութիւն և ընկերութիւն ալ կայ կ'ըսեն և մարդկան նիւթական և բարոյական թշնամիներն որոնելու կ'ելնեն։

Ահարկու պայքար մ'է կ'սկսի. մարդս այս վտիտ և ինչին արարածն՝ Պրոմեթէի հրով վառ՝ բնութեան վիշապներու և ընկերային հրէշներու դէմ կ'խկլակէ անվեհեր և մինչև մէկ կողմէ կոշտ բնութեան անակնկալ ասպատակութիւնները կ'սանձէ, միւս կողմէն մարդակեր բռնակալներու գլուխը կ'ջախջախէ, թշուառութեան և տգիտութեան պատճառները կ'վնտռէ, ժողովուրդները լուսոյ կ'հրաւիրէ, աշխատութիւնը, բանականութիւնը, հոգին վերջապէս իր կապանքէն կ'ազատէ և նոր դար մը կ'բանայ այն հէր և դատապարտեալ էակներուն առջև՝ որոնք կուռքերու առջև ծունր դնելու վարժեր էին, և այս է մեր ճակատագիրն ըսելով՝ հրաշքի կամ վերջին փողին կ'սպասէին . . . ։

***

Արդ՝ միթէ այս մտային և բարոյական յեղափոխութեան ներդործութիւնն մեր կողմերն ևս կ'տեսնուի։ Ասելի պարզ ըսենք. արեւելեան բռսբեկիրթ կարծեցեալ ժողովուրդները՝ թող բնութեան՝ քաղաքական պատուհասներէն զերծ են արդեօք։

Աւա՜ղ, անտառները գաղմնոներէ մաքրեցան, գետեր և հեղեղներ մեր դաշտերն ու արտերը ողողելէ և աւերելէ դադրեցան, հիւանդութիւն և սով փոքր 'ի շատէ մարմիններն հաշելէ ու մաշելէ կասեցան, սակայն հրեշադէմ հրոսակներ Հայաստանի տուներն ու եկեղեցիներն ասպատակելէ և քանդելէ չվահեցան։ Գրեթէ ամէն տուն ու խիզան գլխին վերեւը մարդադաւ քիւրտ մ'ունին, ամէն գիւղ ու աւան՝ օտար կամ ընիկ վերագ մ'ունին, ամէն քաղաք՝ անդեղ մը, ամէն գաւառ՝ տէրէպէկ մը, որոյ աչքին չ'կայ բան մ'որ նուիրական թուի, ոչ ընտանեկան պատիւ, ոչ կրօն, ոչ կեանք։ Շատ անգամ՝ ոչ միտիր, ոչ դայմաքամ, ոչ վալի իսկ մը տիկ կ'ընեն, և որ հիանալին է, ասոնք ալ երբեմն անոնց հետ կը դաւակցին և միասին պատժական օրէնքի ազատելու վարպետութիւնը գիտեն . . .։

***

Տարբոյս սիրելիներն վեր պատահած ո՛ր մէկ հարստահարութիւնը նշանակենք, նողկալի, քսամեելի իրողութիւններ կան, մէկ քանին միայն հարեւանցի յիշենք։

Դարձո՛ւր աչքդ Հայաստանի ո՞ր կողմն որ կուզես. ահա Վան, անկիւ կ'երթե զնուար մը, տէրութեան գործակալ մը, երկրին պահպանութեան սահմանեալ սպայ մը՝ և դէպ 'ի Մուշ կ'դիմէ. Ճամբուն վրայ Փշավանք կ'հանդիպի, գեղացիք անկասկած կ'ընդունին, կ'հիւրասիրեն զնիքը, անոր պաշտպանութեան կարօտ են գաղի և աւազակի դէմ, և այս հիւրը՝ փոխանակ պաշտպանի՝ գաղան կ'դառնայ, անմեղայնի կիրքը յարուցանելու կ'ելնէ, կ'սպառնայ, կամակիցներ կը դտնէ և դիմադրող ժողովուրդը քարկոծելով կ'վանէ, կը հարստահարէ ու ապա կը մնայի արձակ համարձակ . . .։

Մի հեւանարՎանէն, անցիր անոր Տէրէսպէյի անուն գեղն եկեղեցիէն, երկիւղած ժողովուրդը կ'աղօթէ անդ, քիւրտերը եկեղեցին կ'հոխեն, կ'սղծեն . . . ժամարար քահանան կ'քարկոծեն, պատկերներն կ'խորտակեն և ժողովուրդն անբան գառնուկներու պէս կ'կեղեքեն, տղայ, աղջիկ կ'առեւանգեն . . .։

Նայէ անգամ մը Հոզուոյ վանքը՝ որ շատ մը վանուց պէս ամայի ու թափուր է դարձեր. վանահայրը Մատթէոս վարդապետը, գաւազան 'ի ձեռին՝ Պոլիս կ'գիմէ դողցուած սրբազան անօթները վնտռելու և քիւրտերէ առած վէրքերը ցոյց տալու . . . փոխանակ

Արապկիրու Մամասեան Ճիհան էֆէնտիին օրինակին հետևելու, որ տեղւոյն եկեղեցւոյ երսուն հազար դահեկանի արժողութեամբ սպասուց կապտումը իմանալով՝ զուռնդ մը քաջեր կ'ժողվէ գլուխը և քիւրտ դողերն քարայրի մը մէջ դանելով՝ բոլոր ոսկի և արծաթ անօթներն անոնց ձեռքէն կ'առնու և առօք փառօք քաղաք կ'դառնայ . . . : Բա՛ջ Ճիհան դու, կ'լուծես ընթացքովդ հարստահարութեան խընդրոյն հանգոյցը*:

Խեղճ Վա՛ն, այս անգամ քիւրտ մը չէ թշնամիդ, այլ նոյն իսկ Շաղախու գեղի միւտիրն՝ որ չորս հայազգի մահու չափ քանակոծ կ'ընէ. և ինչո՞ւ, որովհետև յարդ ու խոտ չեն տարեր իրեն: Արդարև տերութիւնը պէտք է որ այսպիսի պաշտօնականներ յարդ ու խոտ կրելու ղրկէր:

Ահա՛ Հաճին՝ զօրան պէկերու արժանի յաջորդներ ունի: Տեղւոյն դայմանքամն ու միւտիրն են այժմ իր ընտանի թշնամիներն որոց երեսէն կրօնափոխութեան դիմելու կ'ելնէ, թէև ասո՛վ ինքզինքը պատուած կ'լինի տղիտաբար քան տերութեան այն պաշտօնականներն՝ որոց դէմ ուրիշ զէնքերով մաքառիլ հարկ է:

Սակայն Հաճին չէ միայն տեղական կառավարութենէն դանդատողն. ահա Բաղէշ աւելի ծանր աղէտից ներքև կ'հեծէ, կ'ողբայ, արիասիրտ Բաղէշցիք տղա՛ պէս կ'լան՝ որ վայրագ քիւրտեր անդադար իրենց երկիրները կ'արշաւեն, կ'թալլեն, կ'կողոպտեն, մինչդեռ միւտիր ու դայմաքամ իրենց ծխափայտը կ'քաշեն անտարբեր, անզգայ . . . :

Բայց ինչպէս բողոքին, ինչպէս դատի կանչեն այս դաւակից պաշտօնեաներն երբ կ'իմանան որ Երզնկայի Ղուզուլճան նահանգին Ալթուն Հիսէյին պէկ անուն քիւրտն՝ անհնարին չարիքներ գործելէն ետև ժողովրդեան դէմ՝ Երզնկայի կառավարութեան ատենին մէջ անպարտ կ'արձակուի և անտարակոյս առջինէն աւելի բռնութեան նախճիրներ պիտի գործէ անբաստան՝ հետևապէս մեղապարտ ժողովրդեան դէմ, քանի որ անպատիժ մնալու համար 'ի պաշտօնէ

---

*Ինչպէս որ Մասիս կ'գրէ՝ Արապկերի դայմաքամը այս արիասիրտ Հայուն ըսեր է. «Դու տերութեան պատիւը պաշտպանեցիր՝ ոյսուհետև քեզ Ճիհան պէյ պիտի դուչեմ:» Այս բաւական չէ. եթէ տերութեան ականջն հասնի այս քաջութիւնը թերևս Ճիհանը դայմաքամ ընէ:

անցյաղիր ունի . . . : Ինչպէս ունին թերևս Եալովայի Քէրամէթ դեղի քանի մ՝այլազգ չարաղործներ որ սուսերամերկ՝ հայերու վրայ կը յարձակին , սպանելու դիտամբ կ՝վերաւորեն և ապա անդատ և աղատ կ՝ձդուին . . . :

: Լուենք ուրիշ սոյնպունակ իրողութիւններ և հարցնենք , ե՞րբ արդեօք պիտի վերնան այս ոճիրներն որ ընկերութեան հիմերը կ՝խախտեն , ընտանիք , տուն տեղ կ՝աւերեն , կրօնափոխութեան , գաղթականութեան , յուսահատութեան կ՝դրդեն , արհեստ , առուտուր , հաղորդակցութիւն՝ի սպառ կ՝ջնջեն և ժողովուրդը թշուառութեան և անսնկութեան անդունդը կ՝գլորեն : Իրաց այս վիճակն ոչ միայն քրիստոնէից այլ նոյն իսկ օսմանցւոց ցնասաբեր է , տէրութեան շահերուն , օրինաց , արդարութեան հակառակ են , և հեսեասկէս անհրաժեշտ պարտ է այն անսանձ , անօրէն վերադներն բնաջինջ ընել : Տէրութեան փորձերն այս մասին մասնակի դարմաններ բերին , այլ շատ տեղեր չարիքն աւելցուցին : Արմատական անօրէնութիւն մը պէտք է . այս անօրէնութեան հիմ՝ մի միայն կրթութիւնն , ազատութիւնն և իրաւանց հաւասարութիւնը կ՝դնենք և ուրիշ անդամ մեր թուիքն ալ այս մասին պիտի յայտնենք :

---

## ՇՐՋՄՈԼԻԿ ՔՈՒԷԳԻՐ ՄԸ

—

. . . Խմբագիր ,

Շրջմոլիկ քուէգրի մը պատմութիւնը պիտի ընեմ՝ քեզի երկտող գրով և յուսամ՝ որ հանդիսիդ մէկ կողմը կ՝հրատարակես :

«Ե՛հ , ինչ այլանշան բաներու վարուութիւն է այդ , կրսես շրսնելով և չորս դիդ կ՝նայիս : —Մի՛ շուտով զարմանար , այլ մոթիկ ըսէ : Միայն մարդիկ չեն մոլորիր երբ անտառներու մէջ կը թափառին , միայն հիւանդ ղլուխներ չեն մոլորիր՝ երբ անուրջներով կ՝մնանին , միայն կուրք լի սրտեր չեն մոլորիր՝ երբ անիրաւութեան անել և պղտոր շաւիղներու մէջ կ՝սողսկին , միայն անփորձ հողմներ սիրոյ հրապուրելի ծուղակներու մէջ չեն մոլորիր , կան նաև այն-

պիսի անշունչ և անասուն բաներ որ շիտակ Ճամբէն կ'շեղին և ան-
կանատը կ'դլորին :

Ահա այսպիսի ակամատի մը մէջ ընկաւ և իմ քուէդիրս և բանը
բանէն անցնելէն ետև երևան ելաւ :

Ապրիլի 30ին քուէհաւարի օր էր և քուէարկութեան մասնակցե-
լու համար նոյն ամսոյն 22ին Ս. Առաջնորդէն ընտրողաց ուղղեալ
հրաւիրագիրներէն ինձ դալիքը դեռ ձեռքս չէր հասած, թէև ան-
համբեր անոր կ'սպասէի և քուէ տալու խնդութենէս քունս կորուս-
սեր էի :

Օրեր, ժամեր կ'անցնին, հնհնուքը միտքս ու սիրտս կ'պաշարէ,
աչքս Ճամբան կ'մնայ, հեռուէն ո՛րու ձեռքն որ դիր տեսնեմ կար-
ծեմ թէ քուէդիրս բերող ցրուիչն է, բայց 'ի զուր կ'կարծեմ:
Այն ատեն խանութ և դնորդ կ'մոռնամ և կ'ելնեմ բարեկամի մը
կ'երթամ լուր առնլու : Կ'նայիմ որ բարեկամս մէկ ձեռքը սրտին
վրայ դրած՝ միւսով դրիչը բռներ քուէթղթի մը վրայ անուններ կը
դրէ : —Ո՛հ, բաղդաւոր մարդը, կ'գոչեմ՝ բոլոր ուժովս և անոր
ուսին կ'զարնեմ :

Բարեկամս, ո՛ւհ մը կ'ընէ և սոսկալով ետին կ'նայի : —Ինչ
ունիս, գոյնդ նետեր է, ձի՞ւն մ'եկաւ գլխիդ : —Կ'հարցնե՞ս,
պատասխան տուի անոր : Քուէդիր չ'եկաւ ինձ, թէև ընտրողաց
կարգն եմ, վկայ եկեղեցւոյ բակը կախուած ցանկը. քուէարկու-
թիւնը ժամը 7ին պիտի աւարտի և ես քուէ չտա՛մ:

—Այդ ալ հոգ ընելու բա՞ն է, ի՛մն առ, թղթի կտոր մ'առ
դրէ :

—Ի՞նչ կ'ըսես, բարեկամ, մի՞թէ ես ալ մարդ չե՞մ, ազգ չե՞մ,
տուրք չե՞մ վճարեր : Քուէն ամէն հայու իրաւունքն է, քուէն
նուիրական իրաւունքի մը դործադրութիւնն է, քուէն իշխան, թա-
դաւոր, վերհսկող է այս դարուս մէջ, և ես ալ դոնէ օր մը վե-
հսկող ընկիլ կուզեմ. ես ալ իմ ազատ խղճովս ազգին մեծա-
գոյն ծառայութիւն ընելու ձեռնհաս երեսփոխանները կ'փնտրեմ
ընտրել, այնպիսիներ որ մինակ գ-ա-ղ-ա-ղ չ'օրեն, որ ազգին օգուտն
իրենց անձնական նպատակէն վեր դասեն, որ ժողովուրդն անբանի
տեղ չդնեն, անոր համար տան, և ազգային հաստատութիւնները
զարգացնեն . . . : Ափսո՛ս, քուէդիրս չեկաւ, ասերջանիկ եմ, ըս-
տրուկ եմ . . . :

—Վերջը պիտի բերե՞ս որ ես ալ խօսք մ'ըսեմ; ընդմիջեց բա-

ռեկամն։ Քուէարկութեամբ ազգային գործերու պաշտօնեաներ կարգել աղուոր բան է, իրաւ, բայց ինչ օգուտ որ մեր մէջ անոր յարդը ճանչցող քիչեր կան. ունենք այս իրաւունքին կ'հրաժարին կամովին, թէև ասի իրենց գիտնալու բանն է, այլ եղեան կուզեն ընկել և ժողովրդեան ձայնն առ ոչինչ կ'դրեն, թէև հիմակ ամէն բանի առանցքը ժողովուրդն է, իր իրաւանց և պարտուց գիտակից ժողովուրդ մը։ Քուէ տալու համար հոգի կ'տաս, ո՞վ կ'արդիլէ քեզ, թերևս ընտրողաց մէջ սնոտիդ ծուռ տեսար, և եթէ ընտրողութեան հանդամանքն ունիս, հարկաւ ժամանակին կ'բողոքէիր և իրաւունքդ կ'հաստատէիր։ Բայց միայն սա կուզեմ յայտնել քեզ որ բորբոքելու հարկ չկայ, քու քուէդիրդ տեսայ որ շուկան ձեռքէ ձեռք կ'պտրտէր...։

—Իմ քուէդիրս պտրտի՛, ինչպէս, ինչո՞ւ, ըսի և ելայ դացի որ զայն փնտռեմ։

Ճամբուս վրայ ուրիշներ ալ դտայ որ իմ բաղդիս վիճակեր էին և իրենց քուէդիրը ասդիս անդին, ծակ ու ծուկ կ'փնտռէին։

—Եղբայր, ըսաւ մին, Սահմանադրութիւնն մեր ամենուն դլուխը շրջեց. հայ, ջուր մուդեր եմ և քանի մ'օրէ վեր քուէդիրս փնտռելէն հոգիս բերանս եմ բերեր. հաղար տարին անդամ մը իս մարդու տեղ դնելով քուէ ուզեցին իրենք և ահա քուէդիրս չկայ. դրասենեակս վրայէն թև առեր թռեր է...։

Ուրիշ մ'ըսաւ. —Բարեկամիս մէկն դրաբերին ձեռքէն իմն առեր է ես կ'յանձնեմ անոր ըսելով և դրպանն է դրեր. դրպանն ալ ծակ է եղեր. ընկեր կորեր է... ինչ մեծ կորուստ...։

Երրորդ մ'ըսաւ. —Իմ քուէս անձի մը կողմէն եկան ուզեցին. ես ալ խաբեի համար տուի և մէկ մ'ալ երեսը չտեսայ։

—Հասկա՛ ես որ, ըսի, իմիտիս չէ թէ երեսը՝ կունակն անդամ չտեսայ, միթէ ես աւելի դիմբադդ չե՞մ. ասոր մէջ խաղ մը կայ, բարեկամներ, վերին կամ ստորին զօրութիւն մ'է այս դարանը լարողն, կամ պէտք է հաւատալ որ մեր քուէդիրները թևաւոր էին...։

—Իրաւ, թև ունին, փափսայ եռեէս մէկը. քու բայ քուէդիրդ հիմակ տեսայ Պարսպարէսքս խանը։

—Պատ՛ր... պար... ըէսքս մի, պուռայլի ուշթափ, և շունչս այն տեղ առի։ Հարց ու փորձ ըրի. —Ծրարի մը մէջ գնելով մարդ մ'տաւ ու տարաւ, ո՞ւր չգիտեմ, ըսաւ օտարական մը։

Զայրոյթն ալ իս առաւ, և որովհետև քուէարկութեան ժամն անցեր

էր որոշեցի դէթ վրէժս առնուլ Ս. Առաջնորդին բողոքելով։

Այն ինչ ներս Առաջնորդարան մնայ որ կրօնական մ'ինձ ըսաւ։ —Իմացանք որ փրփրեր ես քուէգիրդ չստանալուդ։ Լա՛ւ, սա ծրարին մէջն է քուկդ ալ։ —Եւ ինչու պահեր էք, խնդրեմ, այդ ծրարին մէջ, մինչդեռ ես մաղ մնաց մունետիկ պիտի հանէի փընտռել տալու։ —Վասն զի դու ետ դարձուցեր էիր։ —Ե՛ս, ոչ միայն ես այդպիսի բան մը չըրի, այլ և սատիկ կատղած եմ որ իրաւունքս չգործադրեցի։ Տուէք սա քուէգիրս, գոչեցի, և գրպանս դնելով դուրս ելայ մրմռալով.

—Վա՛հ մեծ մարդը, վա՛հ մեծ մարդը...։

Մայիս 2. 1871 Ս. Վ.ԱՀՈՒՆԻ

## ՐԷՖՕՐՄ ՀԱՑՈՑ ՎՐԱՑ Կ'ԽՕՍԻ

Ինչո՞ւ չէ, երբ աղտ մը, մուր մը հայոց վրայ քսելու պէտք զգացուի, և զայն աղտը վճարող մը գտնուի...։

Ուստի չզարմացանք բնաւ երբ Ռէֆօրմ մէկ թերթին մէջ երկու քստմնելի յօդուած տեսանք Մեծ. Աղաթօն էֆէնտիի, Ընտրող. ժողովոյ և ազգ. Սահմանադրութեան դէմ։

Երկու յօդուածն ալ արժանի են Ռէֆօրմի տհայ դրչին, երկուքին մէջն ալ իր գեղեցիկ ոգին կ'փայլի և մեկնութեան կարօտ չեն։

Մեր միտքն ոչ Ընտրող. ժողովն և ոչ 'ի մասնաւորի Մեծ. Աղաթօն էֆէնտին պաշտպանել է, անոնք մեր պաշտպանութեան կարօտ չեն, այլ միայն գիտութեան, ճշմարտութեան և ազնուութեան քարոզ թերթին քանի մը սխալ կարծիքն ու տեղեկութիւններն ուղղել։

Նախ՝ Ռէֆօրմի դայրոյթը գրգռող պատրուակն իր վսեմապատիւ խմբագրին անունն Ընտրելեաց ցուցակին մէջ տեսնելն է, այս ալ դիպած է մ'օր առաջ (թէև ինքն իրը ընտրող առած դիրն ընտրելեաց ցանկին հետ Ապրիլի 22 թուականը կ'կրէ). վասն զի քաղքիս շատ մ'երևելի անձերու հետ իր անուան յիշատակութիւնը խիստ անպատիւ թուեր է նորին վսեմութեան...։

Ընտրողական ժողովն՝ ըստ Սահմանադրութեան՝ և չէ թէ Գաղղիոյ հանգուցեալ կառավարութիւնն դրութեան համեմատ՝ Ընտրելեաց ցանկ մը պատրաստեց և չուզեց մոռնալ Ռէֆօրմի վսեմա-

պատիւ խմբագիրն ալ՝ կարծելով թէ լիովին հայրութիւնը չէ տրուած ցեր։ Իսկ ընտրելիներ ցոյցակի մասին ըրած նմանութիւնը բոլորովին անհիմն է։ ըստ որում պաշտօնական հնչեալ բանագատութիւն չկար բնաւ։ Առաջնորդարանի ցոյց տուած ընտրելիներն ընտրել տալու, այլ ամէն ընտրող ազատ էր նոյն իսկ Բէֆէրմի վեհանդատաւ խմբագիրը չընտրել և գուրան ընտրելի փնտռել։

Բ. Բէֆէրմի վեհմ. խմբագիրը պէտք էր գիտնալ որ վարչական պատասխանէն ետքը՝ թէև դատ մը մեր ազգային Սահմանադրութիւնը դադրեցաւ, սակայն Բ. գուրը վերջին յատուկ հրամանագրով ասնոր գործադրութիւնը հրամայեց և արդէն Կ. Պոլսի և տրիշ շատ գաւառներու մէջ տեղի ունեցած սահմանադրական գործողութիւններն այս մեր ասութեան կ'վկայեն։ Ուստի երբ Բէֆէրմ ազգ. Սահմանադրութիւնն անվաւեր կ'կարծէ մեծապէս կ'սխալի։ Սահմանադրութիւնը դադարեալ չէ, այլ՝ որոշեալ պայմանաժամին համեմատ վերաքննութեան տակ է։

Գ. Փափաքելի էր իմանալ թէ ինչու համար Բէֆէրմ Ընտրող. ժողովին կազմութիւնն ապօրինաւոր կ'համարէ. իրեն համար ոչն է օրինաւորը, քանի որ Սահմանադրութիւնն ալ կ'հերքէ։ Ս. Առաջնորդն՝ միշտ ըստ Ազգ. Սահմանադրութեան, որ միանգամայն տէրութեան օրէնքն է, կրնար ինքնին սահմանել Ընտրող. ժողովի անդամներ, բայց նորկայ պարագայիս մէջ խոհեմութիւն դատեց Ընտրող. ժողով հրաւիրել և լոկ Ընտրող. ժողով մը կազմել, այնպէս ինչպէս որ արդէն քանիցս անգամ ընտրուեր էին նոյն իսկ նախորդ վարչութեան անդամներ։ Իրօք ապօրինաւորութեան վերջ տալու համար էր որ Ս. Առաջնորդը սահմանադրական դատաական ժողովը կազմելու ձեռնարկեց, և եթէ Բէֆէրմի փափաքն այս չէ, հապա ինչ է։

Աւելի ծանր բան մը չըսելու համար՝ արդարև ծաղրելի՝ ընդդիմացողները չէ ըստ մեզ՝ այլ այն ոգին որ օտար լեզուաւ և օտարոյց ոգիով ազգին օգտակար և պատուաւոր անդամները կ'նշանակէ, կ'բամբասէ և ինքնինքը ծաղր ու ծանակ կ'ընէ։ Մը լրջամիտ օտարականը կարող է կարդալ Բէֆէրմի դրած այն յօդուածները և չըսել, «Հայն իր ձեռքովն իր տունը կ'քանդէ և մեր ծիծաղն ու միանգամայն արդահատութիւնը կ'շարժէ. Թո՛ղ հայերն իրենց ազգայնոյ լրագրներն իրենց ձեռքը լուան, ինչ հարկ կայ մեզի ցոյցնել...։» Իրաւ է, բայց կիրքն ուր կ'մղէ զմարդ...։

Լ.

# ՔԱՂԱՔԱԿԱՆ

—

Բարիզի յեղափոխական իշխանութեան ահռելի արարքը լիովին շփոթեց ֆոֆոն բառին էական իմաստը։ Թէև Նէրոպայի այլ և այլ աղտաական պետութիւններու մէջ, ինչպէս Յունկիա, Հելլէնիա, Պերճիքա, Գերմանիա, սոյն ընկերային կառավարութիւնը գոյութիւն ունի և հանդարտիկ կ'գործէ, սակայն այժմ ֆոֆոն բառն ահարկու ճիրաղ մը կ'երևի մեզ և անիշխանութեան, վայրենութեան և աւտարութեան յարակից պաղատարներ կ'յուզէ մեր մտքին մէջ։ Կան նաև այնպիսի անձինք որ ֆոֆոն համանշան կ'համարին ֆոֆոնիզմի (հասարակատութիւն) և այդ նոյն անունն իր նախնական կամ բառական պարզ իմաստին վերածելով՝ լոկ իբր գիրք, շէն նշանակութեամբ կ'ըմբռնեն։

Ինչպէս իրերն՝ նոյնպէս այս իրերը ներկայող բառերուն իմաստը ստէպ կ'փոփոխուին ըստ տեղւոյ և ժամանակի, այսինքն մի և նոյն բառը տարբեր ժամանակ և տարբեր տեղ զատ զատ նշանակութիւն կ'ստանայ։ Եթէ մարդ մը լոկ բառարանի և պատմութեան յարելով այս կամ այն ընկերային բառին նշանակութիւնը ճշդրտել կամենայ թիւր ըմբռնում մը կ'ընդունի, ըստ որում՝ ամէն դիտութեան սէջ՝ քաղաքականն ևս իր զանազան երեսներն ունի և առանց իրողութեանց խորին դիտակցութեան այս կամ այն ընկերային կամ քաղաքական դրութիւնը նշանակող անուններն ունայն ձայներ կ'դառնան։*

**

Ուրեմն ինչ է հասարակուրդ։ Հ. Ահրէնս՝ գերմանացի նշա-

---

* Այս սկիզբը դնելէն ետև՝ քանի որ արդի իմաստով ֆոֆոն ըսուած բառն մեր մէջ կատարելապէս չկար և չկայ, հարկ կ'լինի բառ մը հնարել։ Ըստ մեզ յարմարագոյնը կ'թուի հասարակուրդ բառը յատկացնել, որուն տրուելիք սահմանէն բուն իսկ էութիւնը եզրակացնել դժուարին չէ։ Արդարև ամէն առաջ մեր քաղաքական անութիւններու մէջ թագաւորական իշխանութիւն անուաներ էինք ֆոֆոնին, սակայն մեր միտքը յատկապէս Բարիզի յեղափոխական կառավարութեան կ'նայէր և ըստ կարի այս բառը Բարիզի ֆոֆոնին կաղմութեան ձևը կ'ներկայացնէ։

նաւոր իրաւագէտը կ'պատասխանէ. «Հասարակուրդը տեղաւորեալ ընտանեաց և անհատներու հասարակութիւն մ'է որ կենաց ամէն էական նպատակներու համար կ'աշխատին։ Հասարակուրդն ոչ միայն քաղաքական այլ և ընկերային հաստատութիւն մ'է»։

Ընկերային հաստատութիւն մ'է հասարկուրդն, հետևապէս մարդկային ընկերութեան չափ հին և ամէն կառավարութեանց սաղարդն ձևն է։ Իր շրջանին մէջ՝ հասարակուրդն անկախ կ'գործէ, իր մասնաւոր շահերուն վրայ կ'հսկէ, իր յատուկ կեանքն ու վարչութիւնն ունի։ Ինքն իր ծոյէն կ'կազմէ իր ընդհանուր երեսփոխանական խորհուրդը, կ'սահմանէ գործադիր պաշտօնեաներն՝ և ներքին վարչութեան իրաքանչիւր ճիւղին համար ունի հասարակապետ, դպրաւոր, մասնակարար, որոնք հասարակուրդին տնտեսական, դաստաստանական, ելմական, կրթութեան գործերուն կ'հսկեն և մանրանկար հասարակապետութեան մը պակերը կ'ընծայեն. սակայն բոլոր այս ինքնօրինութեամբ քաղաքական անկախ մարմին մը չ'կազմեր հասարակուրդը պետութեան մէջ, այլ շղթային մէկ օղակն է հայրենեաց մէջ՝ և ընդհանուր խնդիրներու համար նահանգին, դաւառին և հուսկ ուրեմն կեդրոնին կ'գիմէ և անոնմէ կ'սպասէ ճիշտ ու հրաման որ ըստ այնմ շարժի։ Կեդրոնական կառավարութեան մարը չտեսնուիր ամէն առթիւ հասարակուրդին մէջ, ինքնավարութեան (self-government) սկզբունքը լիովին 'ի գործ կ'գրուի այն տեղ, և մարդիկ աղատօրէն կ'վարեն իրենց անձնական գործերու հետ հասարակուրդին տեղական գործերը։

Երբ հասարակուրդը բաւական ընդարձակութիւն ստանայ քաղաքապետական իշխանութեան ձև կ'առնու և իր պարտուց հետ իրաւունքը կ'ընդարձակի։ Ընդհանրապէս Գերմանիոյ մէջ՝ հասարկրդային երեսփոխանութեան միջոցաւ ուղղակի կ'ընտրուի քաղաքապետական իշխանութիւնն, այս է աւանապետ (bourgmestre) և խորհրդականք, իսկ կեդրոնական կառավարութիւնն իրաւունք ունի միայն զանոնք հաստատելու։

* * *

Սակայն Գրանսայի մէջ՝ հասարակուրդը՝ երբեմն աւատական դրութեան ենթակայ, երբեմն թագաւորներու ձեռքը խաղալիկ դարձած՝ Պետութեան մէջ, կեդրոնաւորութեան (centralisation) մէջ իր էութիւնը կորոյս մեծ յեղափոխութեան ձեռօք, վասն զի հա-

սարակուրդի կարևորութեան և կազմութեան վրայ Ճշգրիտ գաղափարներէ զուրկ էր Ֆրանսա՝ և՝ աստատական դրութենէ ազատելու դիտմամբ միապետական դրութեան անդունդն ընկաւ, այնպէս որ առանց կեդրոնին դիտութեան տերև մը չէր շարժեր, ծառ մը չէր կարուեր, Ճամբայ մը չէր բացուեր նոյն իսկ աւանի մը մէջ։ Այս թիւր ըմբռնմամբ կրսէ դարձեալ Ահրէնս «Հասարակուրդն իր էութիւնը Պետութենէ (Etat) կ'ընդունի և իշխանութիւն ունի միայն կեդրոնին պատգամաւորութեամբը. ուրեմն կենդանի անհատութիւն մը (individualité) չէ, այլ երկրին մէկ մասն՝ և Պետութիւն կոչուած գերագոյն էակը՝ նոյն երկիրն ըստ հաճոյս կ'կտրէ և նահանգի, գաւառի և հասարակուրդի կ'բաժնէ։ Ուրեմն հասարակուրդը Ֆրանսայի մէջ Պետութեան մէկ արարածն է, բայց երբեմն մ'որ միշտ անչափահաս կ'մնայ...։»

Ահա այս խօսքը Ֆրանսայի ամէն աղէտից շարժառիթը կ'մեկնէ։ Ազատութեան համար հոգի տուող ազգ մը միշտ անչափահաս տղայ մը մնացեր էր, սակայն ծայրայիր գաղափարներով և պատրանօք լի տղայ մը էր։ Երբ իր շղթաները կ'կոտրին՝ այն երեխան որ ամենաչնչին գործի մը համար անդամ կեդրոնին օգնութեան կարօտ էր որպէս զի քալէ, կ'մոլորի և թագաւորութեան դիրքն անվրէպ կ'ընկնէր նորէն, եթէ Բարիզի ղարհուրելի դան իրեն աչքը չ'բանար։

Եւ սակայն արդէն Ֆրանսայի նշանաւոր գլուխներ ապագայ փոթորիկը գուշակելով՝ վերանորոգութեան հարկը տեսեր էին և անդադար կ'յորդորէին Պետութիւնն որ ժողովրդեան տեղական գործերուն չը խառնուի և իր ներգործութիւնը լոկ հանրական շահուց պահպանութեան մէջ ամփոփէ։ Ծ. Սիմոն կրսէր. «Ցեղափոխութիւններն անկարելի գործերու գաղտնիքն է արդիլել որ փափաքելի չդառնան.» և կ'յորդորէր գերմանական հասարակուրդն ազատ դրութեամբ հաստատել 'ի Ֆրանսա։

«Բայց կ'առարկեն թէ ժողովուրդն անկարող է ինքզինքը կառավարելու, կ'յարէ Ծ. Սիմոն, և կառավարութիւն մ'ընտրելու, ուստի իբր բարիք ընդունիլ պէտք է իրեն տրուած կառավարութիւնը...։ Ի՞նչ է խնդիրը հասարակուրդին մէջ. տեղւոյն չափաւոր կալուածքը պահպանել, բարւոքել, յօգուտ հասարակաց անոնց եկամուտները գործածել խոհեմութեամբ, տեղական գործերու համար պաշտօնակալներ ընտրել, անոնց վրայ հսկել, դպրոց, հիւանդանոց մատակարարել, փողոցներու մէջ անդորրութիւն պահել տալ,

ծամբայ բանալ, մէկ խօսքով գեղի կամ քաղքի մը համար ընել այն ամեն բաներն զոր ընտանեայ հայր մ'իր տան մէջ կ'ընէ : Ասի կարելի՞ է բայց անշարք պաշտօն մ'է . . . : Արդ՝ յայտնի է, որ այս-պիսի հասարակութիւնի մը մէջ ոչ ձեռնհաս պաշտօնեայ կը պակսի և ոչ ուշիմ ընտրողներ . . . : Այս ինքնօրինութեամբ քաղաքացիներն իրենց կարևորութեան և արժանապատուութեան զգացումը, իրենց իրաւունքին գիտակցութիւնը կ'ուռնանան» :

Ինչպէս միշտ՝ ահա այսօր դարձեալ Ֆրանսա՝ դառնապառն փորձերէ և իր կորստեան ծայրը հասնելէ ետև՝ կանգ կ'առնու և ազատութեան մէջ իր բազմաբիլմի աղ՝ տից դարման մը կ'փնտռէ : Ազգաբնին ժողովն ակամայ հասարակապետութիւնը կ'պահէ և հասարակաց-դային (communal) և քաղաքապետական (municipal) դրութիւնը կ'ընդունի և զայն բոլոր Ֆրանսայի մէջ հաստատելու համար օրէնք կ'շինէ :

Արդ՝ քանի որ Ազգային ժողովն այս որամադրութիւնն ունի, կրնայ հաստատիլ թէ ինչ պատճառաւ ուրեմն Պ. Թիէր չուզեց ճանչնալ և ընդունիլ Բարիզի ֆէոդէրը :

Ահա այս տեղ երևան կ'ելնեն զմտաղանութիւններ մեր նշանակած հասարակաց-դային և Բարիզի ֆէոդէրին մէջ, զոր թագաւորական իշխանութիւն անուանել յարմարագոյն դատեցինք : Ոչ միայն իր կաղմութեան, այլ և իր քաղաքական և վարչական հանգամանաց կողմէ կ'տարբերի դերմանական աւտամի ֆէոդէրը* Բարիզի իմացածէն :

---

*Ֆէոդէրն լաւագոյն կ'պատահի պատմութեան մէջ : Եթէ իբր դէպ, ցեղ, ըմբռնումներ՝ ուր առաջին տեսարանը Հայաշէնին մէջ կ'գտնենք, ուր ասանիրական կամ Դահանդեսական իշխանութիւնը կ'տիրէր . Ամենեք ընդարձակ հասարակաց-դրդ մ'էր Եօթն տուն : Նաղվարդը հրապարակ կ'ելնէր և իր քաղաքային զորձերը կ'տանջնէր : Հռոմի պետութեան մէջ քաղաքապետական (municipes) դրութիւնն ընդերկար տևեց : Գերութեան կամ վնասի միացած քաղաքներ կամ նորատուն գաղթականութիւններ ինքնօրէն կ'կառավարուէին : Մինչեւ դարու մէջ այս տեսակ ինքնօրինութեան յաջորդեց աւատական իշխանութիւնն (féodalité) և քաղաքներ ազատ պաշտօնեից տեղ անցան իշխան, նախարար, ասպետ, և ասոնց ծառայ . երբեմն նոյնս տարուն ժողովուրդներ Ֆրանսայի մէջ Լուսի Գէրն 12դ դարուն նախնի հասարակաց-դրներն աւատական իշխանները ձեռքէն ազատեց և մասնաւոր արտօնութիւններով օժանց՝ որպէս զի կարող լինի անոնց օգնութեամբը երբեմն աւատական դէմ մաքառիլ, սակայն թագաւորական իշխանութիւնն աչ զօրանալով՝ հասարակաց-դրներն անհետ եղան 'ի Ֆրանսա : Վերջապէս մեծ յեղափոխութիւնն եղաք Ֆրանսայի հողը զանազան բաժանմունքներ կրեց հետզհետէ, որ են հասարակաց-դրդ, շրջանակ (arrondissement), նահանգ (canton), գաւառ (département) . այլ սակայն թէ հասարակաց-դրդական և թէ քաղաքապետական ազատութիւններն՝ կենտրոնաւորութեան (centralisation) վարմին մէջ սեղմուելով անուանական դարձան, մինչ կրկին՝ և սակայն քանց խաղաղիլ՝ Խ՝ Անկեան տարբ ներ ուղղութիւն մ'առին հասարակաց-դրդները և Սարսսուեան ազատաբար ոգին անտառներու, լեռներու և գետերու մէջ՝ ընդհակառակն՝ անջիջ մնաց, այնպէս որ իրենց թագաւորական և քաղաքապետական արտօնութիւններն առևտրական ճարտարութեան և հարստութեան հետ աւելնալով ազ-

Դեպ ի առաջ Բարիզ՝ սովորական հասարակության պէս սահմանափակ շրջան մը չունի, և Ֆրանսայի միւս հասարակաց պէս երկրային ատրաբաժանում մը չէ, այլ ահագին ա[illegible] մ'ուր բազմաթիւ շրջանակներ, (arrondissement) հասարակաց [illegible] թաղեր կ'գտնուին։ Սոյն շրջանակներու խորհրդոց կողմն ալ [illegible] պատգամաւորներով պիտի բաղկանար ատեան մը, այսինքն [illegible] պարոն ֆէլիանոթիան մ'որ առանձնել կուզէր այն ամէն գործերն որ Բարիզի ներքին գործոց, օրէնսդիր և դատաստանական ժողովներու և տեսչութիւններու կը վերաբերի։ Թաղապետական իշխանութիւնը կուզէր վարել կրօնից, երկրագործութեան, ոստիկանութեան և պաշտօնէութիւնները, ինքը պիտի կարենար ապրիլ հանգիստ զօրքը, ինքը պիտի կառավարէր վիճակաւոր Բարիզը, և միանակ ընդհանուր տրոց, մանրոց, պատերազմի և այն ամ ինքերոց անոր նութիւններն որ ընդհանրապէս Ֆրանսայի կ'պատկանին Ֆրանսայի երեսփոխանական ընդհանուր ժողովին և անոր գործոց նախագահին պիտի թողուր, որոնք իրաւունք չպիտի ունենային միջամտել թաղապետական իշխանութեան կարգադրութեանց, ինչպէս որ ազատ կառավարութիւն մը չմիջամտեր ընտանեաց առանձին գործերուն։

Սակայն Թաղապետական իշխանութիւնն ասով չի խի շատանար անշուշտ, և՝ ինչպէս որ կանխաւ նշանները ցոյց ընդերնաշարժեան (socialisme) ենդիրներ ալ պիտի յուզէր, և ինչպէս 1848ին, վարձ պիտի փորձէր Լ. Պլանի ազգային գործարանները բանալ, ուխտաւորութեան և սեպհականութեան իրաւունքը վէճի առակ ձգել, միով բանիւ Ֆրանսայի ընդերային գրութիւնը վերակազմելու ջանալ։

Պ. Թիէրի պէս լոկ պարբ ու պարկան ազգայնոթիւններու կողմնակից քաղաքագէտ մը, հին դպրոցի աշակերտ մ'որ բառասունն

---

նուականաց ահագին ազդեցութիւնը կոտրեցաւ և երբեմն եղաւ այն հասարակաց ատեանը (chambre des communes) որ այսօր իր ամբոխեան և ազատականութեան կողմն ամէն բարեկիրթ ազդեցութեան դալ ճած է։ Իսկ գիւղական երկիրներու մէջ՝ հասարակութիւն սկսաւ արհեստաւորաց դասուց ընկերակցութիւնք՝ (corporation) որոնք՝ ինչպէս այժմ Թիֆլիզի Հայոց մէջ, իրենց յատուկ յատուկ կանոնագիրը, խորհուրդը, վարչութիւնը, արտաքին [illegible] ունէին և 'ի պահանջել հարկին՝ մեծ զօրութիւն մը կը կազմէին բրոշեալ նպատակի մը հասնելու համար։

Սակայն այս այլազան հասարակութիւններն չունէին այն մեծ նշանակութիւնն որով կ'ընդունէք այժմեանները։ Իրաքանչիւր երկրի մէջ հասարակութիւնը քիչ չատ աղատութեամբ կ'գործեր, և անոնք որ անհատական իրաւանց դիտաշարժութիւնը շուտով ստացան կարող եղան հասնելու այն ինքնավարական կառարելութեան որ մարդկային սեռի փրկութեան միակ միջոցն է։

հոգը կ'սթափի, նոր բաներ սորվելու կ'նկրտի և ակամայ հասարակապետական դրութեան կողմը կ'մղուի պարագաներէ քան համոզումէ ազդեալ, այսպիսի քաղաքագէտ մը կ'ըսենք, չէր կրնար բնականապէս շնորհել Բարիզի այն հասարակրդային աղատութիւններն (franchises) որ՝ ըստ իւր կարծեաց՝ ուղղակի հաւասարականութեան կ'յանդէին։ Եւ արդարև Բարիզի Թաղապետական իշխանութեան ընթացքն ալ 'ի սկզբանէ անտի վստահեցուցիչ ընթացք մը չէր, կանխաւ յայտնեց նա իր ընկերընդդէմ ահարկու հակումներն և 'ի վերջէ Բարիզի փլատակներու ներքև կորաւ իր պաշտպանած դատին հետ, զոր թերևս պատմութիւնն օրին մէկը պարզէ և Պիսմարգի սա վճիռը թէ՝ «Ֆրանսայի ամէն յեղափոխական շրջումներու մէջ միշտ բանաւոր պատճառ մը կայ» մեկնէ։

***

Բարիզի Թաղապետական իշխանութիւնն դրեթէ երկու ամիս տիրապետելէն՝ վերջին պատերազմէն աւելի մեծ վնասներ Ֆրանսայի հասցնելէն ետև՝ շունչը կ'փչէ, մայրաքաղաքին մէկ մասը աւերակ դարձնելով։ Կառավարութեան զօրքը՝ 80000ի չափ՝ Մայիսի 22ին կ'մտնեն Բարիզ և մինչդեռ ապստամբներուն ձեռքէն ամրոցներ կ'առնուն, պատնէշներ կ'տապալեն և յառաջ կ'անցնին՝ Լատմիրօ Մօնդոտոն, Տուէ զօրապետներուն առաջնորդութեամբը՝ Դիւյլերիի պալատը, Օդէլ-տը-Վիլ, Բալէ Բոյայ, Ժողովարանն և ուրիշ շատ մ'ապարանքներ դժոխային անօրէնութեամբ հրոյ մատնուած կը տեսնեն. հրդեհ մ'որ բոլոր Բարիզն ամփոփելու կ'սպառնար և բնակչաց մէկ մասը շտեմարաններու և ստորերկրեայ վայրեր պատսպարան մը գտնելու մղելով՝ 50 հազար հոգի զոհ կ'տանի։ Թաղապետական իշխանութեան անդամներն յուսահատ՝ խոյս կ'տան ոմանք օդապարիկով. ոմանք՝ Տէլէքլիուզ, Տոնպրօվքի, Բիկո, Վալլէս ևն հրացանի բերանը կ'երթան, իսկ Բիյադ, Քլիուզրէ, Բանվիյէ դեռ ևս անյայտ են։ Բարիզի արքեպիսկոպոսը Տարպոյ շատ մը եկեղեցականներով կ'սպանուին ապստամբաց ձեռաք և հազիւ ուրեմն Մայիսի 29ին քաղաքը լիովին կառավարութեան ձեռքը կանցնի։ Հէլվէտիա, Պէլճիքա, Սպանիա փախստական ապստամբները ներս չընդունուելու հրամաններ կ'հանեն։ Ֆրանսայի և Գերմանիոյ մէջ խաղաղութեան վերջագիրը կ'ստորագրուի։

## (ԻՎԱՆՕԷ)

Հրէայն՝ ուխտաւորին խշտեկին նման խշտեկի մը վրայ պառկեր էր և վրդովեալ քուն մը կ'քաշէր։ Առջի իրիկուն հանած զգեստներն իր շորս դին պատեր էր այնպէս որ քնանալու տեղը չ'առնուն չտանին։ Իր ձակտին վրայ հողեվարքի նման շփոթ մը կ'տեսնուէր։ Իր ձեռներն ու թեւերը ջղաձիգ կ'շարժէին՝ որպէս թէ ճիւաղի մը դէմ կ'մաքառէր։

Եբրայեցի լեզուաւ շատ մը բացագանչութիւններ ընելէն զատ՝ հեռաւեալ խօսքերը անկլօ-նորման լեզուաւ բացորոշ արտասանեց. «Ի սէր Աստուծոյն Աբրահամու՝ խնայէ հէք ծերունի մարդ մը. աղքատ եմ, ստակ մը չունիմ, եթէ երբէք երկաթովդ իմ անդամներս ջախջախես, դարձեալ չպիտի կարենամ քեզ դոհ ընել։

Ուխտաւորը հրէին երազը մինչև վերջը մտիկ ընել չուզեց, իր դաւաղանով անոր դպաւ։ Այս դպումն կ'մնանար անշուշտ իր երազին ահուելի մէկ առարկային հետ, վասն զի ծերունին ընդոստ կանգ առաւ, իր սպիտակ մազերը գրեթէ գլխին վրայ անկուեցան և իր հագուստին մէջ մտուելը ինքզինքը շատ մը ծածկելով, մինչ դեռ բազէի մը պնդութեամբ միւս մասերը բռներ կեցեր էր, ուխտաւորին վրայ իր սև ու սուր աչերը սևերեց որ վայրագ զարմացում և ջղաւոր երիչոտութիւն կ'յայտնէին։

—Խահակ, իզնէ մի՛ վախնար— ըսաւ ուխտաւորը —եռ իրը բարեկամ քու քովդ է'դամ։

—Ծո՛ղ Իսրայէլի Աստուածը վարձատրէ քեզ— գոչեց հրէայն շունչ առնելով —երբաղ մը կ'սեսնէի. բայց դովեալ լինի հայր Աբրահամ, մինակ երբաղ մ'էր։

Յետոյ՝ պահ մը խորհելով՝ իր սովորական ձայնովը յարեց։

—Բայց այսպէս առտու կանուխ ի՞նչ ունիս ըսելու խեղճ հրէի մը։

—Սա կուզեմ յայտնել— ըսաւ ուխտաւորը —որ եթէ այս տունէն անմիջապէս չելնես և ճամբաղ չշարունակես, շատ հաւանական է որ մեծ փորձանքի մը հանդիպիս։

—Սո՛ւրբ Աստուած— ըսաւ հրէայն —ինձի՞ պէս հէք մարդու մը վնաս հասցնելով ինչ օգուտ կրնայ ծաղիլ։

—Դու իզնէ աւելի լաւ կրնաս դուշակել թշնամիներուդ խորհուրդը— ըսաւ ուխտաւորը, բայց հաւատի եղիր սա պարագային վրայ որ երբ երեկ իրիկուն տաճարականը սրահէն անցաւ իր մահմետական սղաստաւորներուն արտասերէն քանի մը խօսք

ըսաւ՝, ապսպրեց որ ուղևորութիւնդ լրտեսեն այս առուն՝ այն տունէն բաւական հեռու տեղ մը քեզ ձերբակալ ընեն, և Ֆիլիպ տը Մալվուազէնի կամ Բէժինալտ Ֆրօն-տը-Պէօի դրաշեակը տանին քեզ։

Կարելի չէ բացատրել թէ ի՞նչ անհնարին սարսափ պաշարեց հրէայն երբ այս լուրն առաւ. կարծես թէ լեռվին ուժաթափ մնաց. ձեռներն երկու կողմէն կախեց, գլուխը կուրծքին վրայ ընկաւ, ծունկերը դայթեցան, իր մարմնոյն մէն մի ջիղն ոլոր ոլոր դարձաւ և ուխտաւորին ոտքն ընկաւ. չէ թէ մարդու մը պէս որ կամովին կ'ծռի, ծունր կ'դնէ կամ դուռ շարժելու մտօք երկիր կ'պադնէ, այլ այնպիսի մէկու մը պէս որ անտեսանելի զօրութենէ մղեալ՝ դետին կ'տապալի անկար և անդիմադիր։

—Սուրբն Աստուա՛ծ Աբրահամու— գոչեց նա իր խորշոմած և գոց ձեռները վեր վերցնելով՝ առանց իր ալէզարդ գլուխը դետնէն բառնալու. —ո՛ սուրբ Մովսէս, ո՛ օրհնեալ Ահարոն, երազս անհիմն չէր, և անուրջ մ'ընդունայն չպաշարեր մեզ։ Արդէն կ'զգամ որ անոնց սուրն իմ նեարդս կ'պատռէն, կզգամ որ մարմինս տանջանքի կ'մատնեն ինչպէս որ Հռաբայի մարդոց և Ամմոնի որդւոց վրայ սղոցներ և կացիններ կանցնէին։

—Ոտք ելիր, Իսահակ և ինձ միտ դիր— ըսաւ ուխտաւորը, որ արհամարհանօք խառն արդահատութեամբ մը կ'դիտէր հրէին այս ծայրայեղ տագնապը։ —Անհուդողդ իրաւացի է, քանի որ իշխաններ և աղնուականներ միշտ կ'չարչարեն հայրենակիցներդ անոնց ինչքն ու գոյքը կողոպտելու համար։ Բայց ողբալու ատեն չէ, ոտք ելիր ըսի, և պիտի ցոյց տամ քեզ խոյս տալու միջոց մը։ Իսկոյն ելիր դնա այս տունէն՝ մինչդեռ ամէն սնոցիք առջի դիշերուան խնջոյքէն ետքը կ'հանգչին։ Ես քեզ անուտին ծածուկ ուղիներէն պիտի առաջնորդեմ, պահնորդին չափ դիտեմ անոնք, և մինչև որ նիզակախաղ հանդիսին դացող աղատանիի մը ապահով պահպանութեան չյանձնեմ քեզ՝ քովդդ չպիտի հեռանամ. դու այնուհետև պաշտպանիդ բարեսիրութիւնը շահելու հնարը կ'գտնես։»

Քանի որ Իսահակ կ'լսէր այս աղատուի միջոցը՝ սկսաւ քիչ քիչ դետնէն վեր ելնել մինչև որ ծունկի վրայ եկաւ. յետոյ իր երկար ալէխառն մազերն ու մօրուսն ետին ձղեց և ուխտաւորին երեսը նայեցաւ իր սուր սև աչերով՝ որոց ակնարկը թէ

յոյս և թէ երկիւղ կը յայտներ և լիովին կասկածէ ղերծ չէր։ Սակայն երբ ուխտաւորին վերջին խօսքը լսեց, կարծես թէ իր նախորդ սարսափն աւելի ուժգին սիրտը դրաւեց և երեսն 'ի վայր դեռին ընկնելով՝ պոռաց.

—Ինչպէս ես կրնամ ուրիշի մը բարեսիրութիւնը շահիլ, աւա՜ղ, ի՞նչպէս. միակ միջոց մը կայ քրիստոնէի մը սիրտը վաստրկելու, և ողորմելի հրէայ մ'ի՞նչպէս կարող պիտի լինի այս միջոցը գտնել, քանի որ հարստահարութիւններն զինքը Ղազարու չքաւորութեան դուռը հասուցած են։ Յետոյ որպէս թէ կասկածը միւս բոլոր զգայութիւններուն տիրած լինէր, հրէայն յանկարծ գոչեց։ —Ի սէր Աստուծոյ, պատանի, զլիս մի՛ մատներ. յանուն Արարչին՝ որ մեզ ստեղծեց, թէ հրէայն, թէ հեթանոսը, թէ իսրայելացին և թէ իսմայելացին, մի՛ մատներ զլիս։ Ես մուրացիկ քրիստոնէի մը սիրտը շահելու միջոցը չունիմ, եթէ այս միջոցը բէնէ մ'անգամ լինի։» Այս խօսքերն ըսելով՝ հրէայն ոտք ելաւ և աղերսալի նայուածքով մ'ուխտաւորին վերարկուն բռնեց։ Ուխտաւորն անոր ձեռքէն հեռացաւ, որպէս թէ տարտղնելի աղտ մ'ունէր անոր շօշափումը։

—Եթէ աղքիդ բոլոր զանձերովն անգամ բեռնաւորուած լինէիր— ըսաւ ուխտաւորը —ես ինչ օգուտ պիտի ունենամ քեզ ձեռնտեղովս։ Այս հագուստովս ինքզինքս աղքատութեան ուխտած եմ, և զայն ուրիշ քանի հետ չպիտի փոխեմ այլ միայն ձիու մը և վերտ զրահի մը հետ։ Սակայն մի՛ կարծեր բնաւ որ քու ընկերութենդ կ'ախորժիմ կամ քեզնէ շահ մը կ'սպասեմ. եթէ կ'ուզես այս տեղ կեցիր։ Սաքսոն Սէարիկը թերևս քեզ պաշտպանէ։

—Ափսո՛ս—ըսաւ հրէայն—չպիտի հանդուրժէ որ իր հետեւորդներուն միանամ, թէ սաքսոն և թէ նորման՝ ամօթ պիտի սեպէն խեղճ իսրայելացին ուղեկից առնլու, և սակայն ի՞նչպէս կարելի է ինձ Մալվուազէնի և Ֆրոն-տը-Պէօֆի հողերէն անցնիլ։։։։ Քաջ պատանի, քեզի հետ ճամբայ պիտի ելնեմ։ Շուտ ընենք, դօտեպինդ պատրաստուինք և խոյս տանք։ Ահա դաւաղանդ, ինչու համար կը դանդաղես։

—Ձեմ դանդաղեր— պատասխան տուաւ ուխտաւորը իր ընկերին հետ արտորալով. —բայց պէտք է փախչելու միջոցը մը տուծել, եաւէս եկուր։

Ուխտաւորն առաջ անցաւ և մօտակայ խոզիկը գնաց, ուր խոզարած Կիւրթ կ'հանդիպէր, ինչպէս որ ընթերցողը գիտէ։—Նայէ՛ր, Կիւրթ— ըսաւ ուխտաւորը —շուտ տաք եղիր։ Գաղտնի դուռը բաց, և թող առաջ որ հրէայն և ես դուրս եղնենք։

Կիւրթ՝ որուն պաշտօնն թէև այժմ շատ անարդ կերևի մեզ, Սաքսոնեան Անկլիոյ մէջ այնչափ կարևորութիւն կ'ընծայէր իրեն որչափ որ նոյնն ունէր Եւմէ Իթակէի մէջ, Կիւրթ կըսեմ, ուխտաւորին գործածած ընտանեկան և մեծասքանչ լեզուն շատ ծանր դատաւ։ —Ի՞նչ, միթէ հրէայն Ռոթրվուտէն պիտի մեկնի—ըսաւ նստարմկին վրայ յենլով, և առանց խշտիկը թողլու՝ անոր երեսն դուռոզաբար նայելով —և որ մեծն է՝ ուխտաւորին հետ պիտի ուղեկցի՛...։

—Այսպիսի բան մը չէի կրնար երազել անգամ— ըսաւ Վամպա որ նոյն պահուն սենեակը մտաւ —ինչպէս որ կարելի չէ երևակայել որ հրէայն կատր մը խոզի ասպուխտ դողնայ տանի։

—Սակայն— ըսաւ Կիւրթ՝ իրեն բարձի տեղ ծառայող կռնոցին վրայ ընկնելով —երկուքնիդ ալ պարտաւոր էք սպասել որ մեծ դուռը բացուի։

—Սակայն— ըսաւ ուխտաւորը՝ հրամայական ձայնով մը — յուսամ որ այս շնարհը չպիտի մերժես ինձ։

Այս ըսելով դանդաղ խոզպանին խշտեկին վրայ ծռեցաւ և սաքսոն լեզուով քանի մը բառ փսփսաց անոր ականջին։ Կիւրթ՝ իբր էլեկտրական զօրութենէ մը շարժեալ՝ ոտք ելաւ։ Այն ատեն ուխտաւորը՝ մասը բերանին վրայ դնելով՝ որպէս թէ զդայշ լինիլ կը պատուիրէր անոր, յարեց· —Կիւրթ, աչքդ բաց, դու սովորաբար խոհեմ ես։ Քեզ կըսեմ որ գաղտնի դուռը բանաս, վերջէն գործն աւելի աղէկ պիտի հասկնաս։

Կիւրթ եռանդագին փութաց ուխտաւորին կամքը կատարելու՝ մինչդեռ հրէայն և Վամպա՝ խոզարածին յանկարծահաս փոփոխութեան վրայ զարմացած՝ անոնց կ'հետևէին։

—Ջորի՛ս, ջորի՛ս ո՞ւր է— ըսաւ հրէայն, երբ դռնէն դուրս դատաւ ինքզինքը։

—Թերեք սա մարդուն ջորին— ըսաւ ուխտաւորը —եւ ինձ մտիկ ըրէ, ուրիշ ջորի մ'ևս բեր ինձ որպէս զի անոր ընկերանամ և այս սահմաններէն զինքը հեռու տանիմ։ Սէսարիկի մարդոց տալով նոյն ջորին ետ կ'դարձնեմ տպահովապէս, իսկ

դու— յարեց նա, ու խօսքը Կիւրթին ականջին փսփսալով ա-
ւարտեց։

—Ամենայն սիրով— ըսաւ Կիւրթ —ամենայն սիրով, խրն-
դիրդ իսկոյն պիտի կատարեմ։» Եւ անմիջապէս զնաց ուխտաւո-
րին հրամանն 'ի գործ դնելու։

—Կը փափաքէի գիտնալ— ըսաւ Վամպա երբ իր ընկերը
կռնակը դարձուց —թէ ձեզի պէս ուխտաւորներ ինչ կ'սովրին
Ս. Երուսաղէմի մէջ։

—Մեր մաղթանքն ընել, միմո՛ն դու —պատասխանեց ուխ-
տաւորը—մեր մեղաց թողութիւն խնդրել, և ծոմ, պահ, թեամբ,
հսկումներով և երկայն աղօթքներով զօրանալ։

—Այդ բաներէն աւելի ազգու բաներ կ'սովրիք— պատաս-
խանեց միմոնը. —վասն զի ինչպէս կարելի է որ աղօթքն ու ա-
պաշարը կարենան յորդորել Կիւրթը մարդավար լինելու, կամ
ծոմ ու հսկումը՝ ձեզի ջորի մը տալու գինքը մղեն։ Եթէ այդ-
պէս լինէր, ասոյդ եմ որ նոյն մարդավարական պատասխանը պի-
տի ստանայիր անոր սիրական սև խոզէն քու աղօթից և հսկումնե-
րու շնորհիւը։

—Կորի՛ր— ըսաւ ուխտաւորը —դու սաքսօն միմոն մ'ես։

—Իրաւունք ունիս— պատասխանեց միմոնը —եթէ նօրման
ծնած լինիի ինչպէս որ դու ես կարծեմ, ես իրաւունք պիտի ու-
նենայի և իմաստունի կարգը անցնիի։

Նոյն պահուն Կիւրթ փոսին միւս կողմն երկայաւ ջորիներով։
Ճամբորդներն երկու տախտակէ լայն շարժուն կամրջէ մ'անցան,
այս կամուրջը ծածուկ դրան հետ հաղորդակցութիւն ունէր և
փոքրիկ դռնակ մը կար արտաքին պատնէշին վրայ, որմէ ան-
տառը կ'մտնուէր։ Այն ինչ ջորիներուն մօտեցան որ հրէայն
դողդոջուն ձեռօք վերարկուին տակէն կապոյտ կտաւէ ծրար մը
հանեց և թամբին եռեռը տեղաւորեց, իր խօսքին նայելով նոյն
ծրարը «փոխնորդ լաթերն, մինակ փոխնորդ լաթերը» կ'պարու-
նակէր։ Այն ատեն իր տարիքէն չսպասուած շտապով և արա-
գութեամբ ջորին հեծնելով՝ իր վերարկուին ծալքերն այնպէս
որ դրաւ որ գաւակին վրայի ծրարը բոլորովին ծածկեց։

Ուխտաւորն աւելի ծանր կերպով հեծաւ իր ջորին և մեկնե-
լու ատեն Կիւրթին երկնցուց ձեռքն զոր յետին ակնածութեամբ
պագաւ նա։ Խոզպանն ուղևորներուն եռևէն կ'նայէր մինչև որ

ոնտաուին խորերն աներևոյթ եղան, երբ Վամպային ձայնէն խորին մտածութենէն սթափեցաւ։

—Գիտե՞ս արդեօք, իմ բարեմիտ բարեկամ Կիւրթ— ըսաւ միմոսը, —որ այս ամառուան օրս սովորականէն աւելի քաղաքավար և բարեպաշտ կ'երևիս։ Կ'փափաքէի բոկոտն ուխտաւոր մը կամ սեղէմ վանահայր մը լինել այդ անսովոր եռանդէդ և մարդավարութենէդ օգուտ քաղելու համար։ Իրաւի լոկ համբոյր մը քաղելով զոհ չպիտի լինէի։

—Այս անգամ խելացի խօսք մ'ըսիր, Վամպա— պատասխանեց Կիւրթ —թէև լոկ արտաքին երևոյթի վրայ կ'դատես, և ամենէն իմաստունն ասկէ աւելի չկրնար ընել։ Բայց երամակին վրայ հսկելու ատենն եկաւ։

Այս ըսելով՝ դէպ 'ի տուն դարձաւ, միմոսին ուղեկցութեամբը։

Նոյն պահուն ուղևորները՝ մանաւանդ հրէին զգացած սաստիկ երկիւղէն դրդեալ՝ իրենց Ճամբան արագօրէն կ'շարունակէին, վասն զի այն հասակի տէր մարդիկ ուր ուրեմն բուռն շարժումներ կ'սիրեն։ Ուխտաւորն՝ որ կարծես թէ անտառին ամեն ծակ ու ծուկը գիտէր, արտուղի Ճամբաներէ քալելովառջևէն կ'երթար, որով հրէին կասկածները նորէն գրգռեցան, այնպէս որ կ'երևայ թէ պիտի մատնուի և թշնամիներուն ծուղակը պիտի ընկնի։

Արդարև՝ իր կասկածները ներելի էին. վասն զի՝ 'ի բաց առեալ թերևս թեւաւոր հուիները, երկրի, ծովու և օդին մէջ չկար յեղ մ'որ նոյն ժամանակի հրէից պէս՝ անդուլ, ընդհանուր և անհաշտ հալածանաց ենթակայ լինի։ Ամենաթեթև և անհիմն բարուր մը, զուր և անտեղի ամբաստանութիւն մը բաւական էին իրենց անձն ու գոյքը ժողովրդեան կատաղութեան մատնելու. վասն զի՝ Նօրման, Սաքսօն, Դանեցի և Բրիտոն՝ թէև իրարու ներհակ ցեղեր էին, կարծես թէ այս ժողովրդեան ամեն չարիք հասցնելու կ'մրցէին, և կրօնական պարտ կ'սեպէին զայն ատելու, անպատնելու, կողոպտելու և հալածելու։ Նօրմանեան թագաւորները և անկախ աղնուականներն՝ որ ամէն բանական զորձերու մէջ՝ անոնց օրինակին կ'հետևին՝ այս բարեպաշտ ժողովրդեան դէմ աւելի կանոնաւոր և շահադէտ հալածանք մը կը շարունակէին։ Ճօհն թագաւորին համար կ'պատմեն, և այս պատմութիւնը շատերը գիտեն, թէ իր ալքայական մէկ գղեկին մէջ հարուստ հրէայ մը բանտարկելով՝ ամէն օր անոր բերնէն

ակռայ մը հանել կ'տայ եղեր, այնպէս որ՝ երբ խեղճ իսրայելացիին ակռաները կիսովին աւեր դարձան՝ յանձն առաւ մեծակակ զումար մը վճարելու, և այս զումարը կորզելու համար քռնաւորը չարչարեր էր զանի։ Երկրին մէջ գտնուած սպառասար դրամը սոյն հալածական ժողովրդեան ձեռքն էր, և աղնուականներն՝ իրենց վերհապետին օրինակին հետևելու չէին վարաներ՝ ամէն տեսակ հարստահարութեամբ և նոյն իսկ մարմնական տանջանօք զայն շորթելու համար։ Սակայն շահամոլութեան աղդած կրաւորական արիութիւնն կ'յորդորէր հրեաներն ամէն վերահաս չարեաց տոկալու, Անկլեոյ նման ընապէս հարուստ երկրի մէջ իրենց ըրած անբաւ վաստակին սիրոյն համար։ Ամէն տեսակ վհատական գործերու, նոյն իսկ մեր արդէն յիշած յատուկ տրոյ հակառակ՝ որ հրէից վրայ կ'ծանրանային՝ իբր հրէական հարկ, մինակ զանոնք կեղեքելու և կողոպտելու համար հաստատուած էր, դարձեալ հրէաները կը շատնային, ահագին զումարներ կ'դիզէին, որ փոխանակագիրներու միջոցաւ ձեռքէ ձեռք կ'անցնէին —դիւտ մ'որուն համար կ'ըսուի թէ վաճառականութիւնն անոնց պարտուոր է, և այս միջոցաւ կարող կ'լինէին իրենց դոյքը քաղքէ քաղաք փոխադրել, այնպէս որ եթէ այս երկրին մէջ հարստահարութեամբ նեղուէին, ուրիշի մը մէջ իրենց ինչքն ապահով գտնուին։

Այսպէս հրէից ժլատութիւնն ու յամառութիւնը կերպով մը իրենց տիրապետներուն կրօնամոլութեան և բռնակալութեան ներքակ գալով՝ իրենց կրած անդուլ հալածանաց համեմատ կ'աւելնային. իսկ առուտուրի մէջ սովորաբար իրենց հաւաքած հարստութիւնն որչափ որ ստէպ վտանգ կ'սպառնար, ատեն ատեն ալ իրենց ազդեցութիւնը տարածելու կ'օգնէր և տեսակ մը պաշտպանութիւն կ'ապահովէր։ Ահա այս վիճակին մէջ կ'ապրէին հրէաներն. և իրենց բնաւորութիւնն՝ միշտ բռնաբարեալ՝ արթուն, կասկածոտ և վեհերոտ էր, նոյնպէս կամակոր, անբարեսէր և սպառնալից վտանգներէ խոյս տալու յաջողակ։

Երբ ուղևորներն շատ մը խոտորնակ շաւիղներէ շրջայ ընդ փոյթ անցան, ուխտաւորը բերանը բացաւ և ըսաւ։

—Այս քայքայուն կաղնին Գրօն—սը—Պէօի հողերուն սահմանը կ'յայտնէ. արդէն Մալվուազէնի կալուածներէն շատոնց հեռացած ենք։ Այսուհետև անոնց հետաքրքրութենէ վախնալու բան մը չունիս։

—Երանի թէ անոնց կառքերուն անիւները խորտակին—ըսաւ Հրէան —Փարաւոնի հրոսակներուն պէս, որ ծանր ծանր յառաջ քալեն։ Բայց մի՛ թողուր զիս, բարեսիրտ ուխտաւոր։ Մինչդ բեր անդամ մ՚այն վէս և վայրաղ տաճարականն ու իր սարակինացի դերիներն, որ չեն յարգեր ոչ երկիր, ոչ տուն, ոչ աւատական հող։

—Մեր ուղեկցութիւնն այս տեղ կ՚վերջանայ— ըսաւ ուխտաւորը —և պէտք է որ բաժնուինք. վասն զի իմ և քու կարգի մարդերու չվայլեր ասկէ առելի ուղեկից դանուիլ։ Ասկէ զատ՝ ի՞նչ օգնութիւն կրնաս տալսել ինձի պէս խաղաղասէր ուխտաւորի մը՝ երկու սպառազէն հեթանոսներու դէմ։

—Ո՛ չաջ պատանի— ըսաւ Հրէայն —դու կարող ես պաշտպանել զիս, և դիտեմ որ կամք ունիս։ Թէև աղքատեմ, քեզ պիտի վարձատրեմ, չէ թէ դրամով, վասն զի դրամ չունիմ, վկայ է հայր Աբրահամ, այլ...։

—Դրամ և վարձք քեզնէ չեմ խնդրեր— ընդմիջեց ուխտաւորն —ինչպէս որ արդէն ըսի։ Քեզ առաջնորդել կարող եմ, թերևս 'ի հարկին պաշտպանեմ նաև քեզ, վասն զի Հրէայ մը սարակինացի մը դէմ պաշտպանելը քրիստոնէի մ՚անվայել գործ չեմ համարիր։ Ուստի, Հրէայ, կ՚փափաքիմ՝ քեզ ապահով պաշտպաններու ձեռք յանձնել։ Այս միջոցիս Շէֆֆիլտ քաղաքէն հեռու չենք, և այն տեղ կարող ես աղղակիցներ և անոնց մօտ ապաւէն մը դտնել։

—Յակոբայ օրհնութիւնը քու վրադ իջնէ, չաջդ պատանի ...— ըսաւ Հրէայն։ Շէֆֆիլտի մէջ իրօք Զարէթ աղղակցիս հետ կրնամ բնակիլ, և իմ ուղևորութիւնս անվտանգ շարունակելու հնար մը դտնել։

—Շատ լաւ— պատասխանեց ուխտաւորը —ուրեմն Շէֆֆիլտէն կ՚բաժնուինք և եթէ կէս ժամ ևս առաջ քշենք նոյն քաղքին առջևը կ՚հասնինք։

Այս կէս ժամն՝ երկու ուղևորները լուռ ու մունջ անցուցին. կարելի է որ մէկ կեղմէն ուխտաւորը կ՚անդոսներ Հրէին խօսք ուղղելու, եթէ անհրաժեշտ հարկ չլինէր, միւս կողմէն Հրէայն չէր իշխեր խօսակցութեան յորդորել անձ մ՚որուն ուղևորութիւնը՝ Ս. Գերեզման 'ի սրբութեան դրշմ կ՚ընծայէր անոր բնաւորութեան։ Վերջապէս բլրակի մը գագաթը կանգ առին և

ուխտաւորը՝ Շէֆֆիլտ քաղաքը ցոյց տալով՝ որ իրենց ոտքին ներքև կ՚տարածուէր, սա խօսքերը կրկնեց. —ուրեմն այս տեղ իրարմէ բաժնուինք պիտի։

—Բայց խեղճ հրէի մը շնորհակալութիւնը չ՚ընդունա՞ծ կուգես մեկնիլ— ըսաւ Իսահակ. —վասն զի չեմ համարձակիր առաջարկել քեզ որ Զաբեթ աղջկանիս տունը դաս, կարելի է առած ծանրութիւնդ վարձատրելու միջոց մը տայ ինձ։

—Արդէն ըսի քեզ— պատասխանեց ուխտաւորը —որ վարձ չեմ ուզեր քեզնէ։ Սակայն եթէ քու պարտականներուդ երկայն ցանկին մէջ, հաճիս՝ իմ սիրոյս համար՝ ճանկիդ ներքև զըտնուող քանի մը դժբաղդ քրիստոնեաներ բանտէ և շղթայէ ազատ պահել, այս առտու քեզ ըրած ծառայութեանս փոխարէնը լեռվին ստացած պիտի լինիմ։

—Կեցի՛ր, կեցի՛ր— ըսաւ հրէայն՝ ուխտաւորին վերարկուն բռնելով —այդ ըսածէդ եւել բան մը կուզեմ ընել, քեզի համար ընել։ Աստուած գիտէ որ հրէայն աղքատ է, այո՛, Իսահակ իր ազգակիցներուն մէջ մուրացկան մ՚է։ Բայց ներէ ինձ եթէ զուշակեմ քեզ թէ այս պահուս ամենէն աւելի ի՞նչ բանի կարօտ ես։

—Եթէ ճիշտ զուշակես— ըսաւ ուխտաւորը —դարձեալ այնպիսի բան մ՚է իմ խնդրածս որ չպիտի կարենաս ինձ տալ, եթէ ըսածիդ պէս որչափ աղքատ՝ նոյնչափ հարուստ լինիս։

—Ըսածի՛ս պէս մի— ձայնեց հրէայն։ —Ո՛հ, հաւատա խօսքիս, բուն ճշմարտութիւն մ՚է ըսածս. կողոպտեալ, պարտքի տակ ճնշուած, թշուառ մարդ մ՚եմ ես։ Ոխերիմ մարդիկ իմ ձեռքէս տալին խլեցին իմ ստակս, նաւերս և բոլոր դոյքս։ Սակայն կրնամ ըսել թէ ինչ բանի պէտք ունիս դու, և թերևս նոյնը ճարեմ։ Այժմ քու միակ փափաքդ է երիվար մ՚ունենալ։

Ուխտաւորը դող մ՚զգաց և յանկարծ հրէին դառնալով ըսաւ ուրտորնօք. —Ո՞ր սատանան թելադրեց քեզ այդ զուշակութիւնը։

—Ի՞նչ փոյթ է— ըսաւ հրէայն ժպտելով —բաւական է որ ճշմարիտ լինի, և ինչպէս որ փափաքդ զուշակեցի, կարող եմ նաև զայն լնուլ։

—Բայց նկատէ անդամ մ՚իմ կարդս; իմ հագուստս; իմ

ուխտս— ըսաւ ուխտաւորը։

—Ես քրիստոնեաները քաջ կ'ճանչեմ— պատասխանեց հրէայն. —ձեզնէ ամենէն մեծն ու ազատանին ստէպ դաւաղան 'ի ձեռին մնասպաշտական ապաշխարհանք կրելու կելնէ և բոկոտն մեռելներու գերեզմանը այցի կ'երթայ։

—Մի՛ հայհոյեր, հրէ՛այ— ըսաւ ուխտաւորը վէսօրէն։

—Ներէ ինձ— ըսաւ հրէայն —անզգշութեամբ խօսեցայ։ Սակայն երեկ իրկուն և այս առտու քերնէդ քանի մը խօսքեր ելան՝ որ կայծքարէն յայտող նշոյլներու պէս՝ ներքին մտաղը մատնեցին. և ուխտաւորի այս հագուստիդ ներքև ասպետի մը ոսկի շղթան և մորակները պահուած են։ Երբ այս առտու իմ անկողնիս վրայ ծունկեցար՝ անոնք աչքիս զարկին։

Ուխտաւորն իր ժպիտը չկրցաւ բռնել։ —Իսահա՛կ,— ըսաւ նա —եթէ հանդերձդ նոյնպիսի հեռաստնին աչք մը քններ, արդեօք ինչ բաներ պիտի գտներ։

—Մի խօսիր այդ կիտին վրայ— ըսաւ հրէայն դոյնը նետելով. ապա իր կաղամարն ու թուղթ հանեց շտապաւ, իբր թէ խօսակցութեան վերջ տալ կ'ուզէր, և սկսաւ գրել թուղթը իր ցեղապետին ուղղեալ, առանց ջորիէն վար իջնելու։ Երբ գիրն աւարտեց, տոմսակն որ եբրայերէն էր, ուխտաւորին տուաւ ըսելով. —Լիսիսդրի քաղքին մէջ ամէն մարդ կ'ճանչէ Լոմպարտացի Կիրկադ ՀԷՅրամ՝ հրէայն, այս տոմսակն անոր տուր. վեց հատ Միլանի դրամ ունի ծախու. ամենէն դէշը թաղակիր գլխի մ'անդամ կ'վայլէ. տասը հատ ընտիր նժոյգ, որոց ամենէն վատը իր աթուին համար պատերազմող թագաւորի արժանի է։ Ասոնցմէ ընտրածդ քեզ պիտի տայ՝ նոյնպէս գուպարին համար ինչ որ պէտք ունիս. երբ գուպարը վերջանայ՝ առջի վիճակին մէջ զանոնք տիրոջը կը դարձնես եթէ ծախու առնլու համար պէտք եղած դումարը չունենաս։

—Բայց, Իսահակ— ըսաւ ուխտաւորը ժպտելով —միթէ չը գիտէս որ այս տեսակ խաղերու մէջ յաղթահարեալ ասպետին զէնքն ու երիվարը յաղթողին կ'տրուին իբր մրցանակ։ Կարելի է որ ես յաղթուիմ, և հետևապէս կորուսեմ ինչ որ չեմ կրնար ոչ վճարել և ոչ տեղը լեցնել։»

Հրէայն այս ենթադրութեան վրայ փոքր ինչ շուարեցաւ, բայց արիութեամբ զինուելով՝ շուտ մը պատասխանեց. —Հայր Ուրբա-

համու օրհնէնքը քու վրադ պիտի լինի, քու նիզակդ Մովսէսի դաւազանին պէս զօրաւոր պիտի լինի։

Այս ըսելով՝ իր ջորիին գլուխը դարձուց որ Ճամբայ ելնէ, երբ ուխտաւորը՝ ըստ կարգի՝ անոր վերարկուն բռնեց և ըսաւ.— Սակայն՝ Խահակ, դու չես գիտեր թէ որչափ մեծ է վտանգը։ Շատ կարելի է որ երիվարն սպաննուի և զրահը խանդարի, վասն զի միտքս դրեր եմ չենայել ոչ ձի և ոչ մարդ. ասկէ զատ քու ցեղակիցներդ ընդ ունայն ոչ ինչ չեն տար մարդու. պէտք է որ փոխարէն մը տրուի իմ կողմէս։»

Հրէայն ոլորեցաւ իր քուռակին վրայ, փորի ցաւէ բռնուած մարդու մը պէս, սակայն իր լաւագոյն զգացումները զսպեցին իրեն յատուկ ժլատութիւնն, ուստի ըսաւ. փոյթս չէ, փոյթս չէ, թող որ երթամ։ Եթէ ինձ վնաս մը պատահի, դու չպիտի տուժես. եթէ բան մը վճարել հարկ լինի Կիրկատ ճէյրամ կրնայ ներել քեզ իր Խահակ աղգականին սիրոյն համար։ Մնաս բարև. բայց սա խօսքս մտիկ ըրէ, քաջ պատանի, — դոչեց նա ետ դառնալով. —մի՛ խիզախէր չափէն աւելի այն խառնաղանճ կռուին մէջ. այս յորդորս ոչ երիվարին և ոչ զրահին համար կ'տամ, այլ պարզապէս քու կեանքիդ և մարմնոյդ համար։

—Շնորհակալ եմ շատ— ըսաւ ուխտաւորը նորէն ժպտելով —քու մարդասիրական զգացումդ չպիտի մոռնամ, և եթէ 'փոխարէնը չհատուցանեմ՝ ըսել է թէ բաղդը չէ յաջողեր ինձ։

Այնուհետև իրարմէ հեռացան՝ և տարբեր ճամբով Շէֆֆիլա քաղաքը մտան։

## ԳԼՈՒԽ Է.

Շարք անհամար սպայից՝ հետևորդ ասպետաց՝
Պերճ 'ի զէն՝ ժիր 'ի զարդ՝ գայլն հուսկ ընդ յառաջ՝
Մին ընդեր սաղաւարտ, մի ուրիշ տեգ ածէր,
Երրորդ մի փողիպոլուն վահան մի ճոխ վարէր.
Լանուշն անձանձիր զարնէր դափիր երիվար,
Ցամէր սանձ ոսկեղէն՝ և վընջելով փրփրար՝
Պժոյգներու հեծած՝ զինագործ և գարփին
Խարտոցներ 'ի ձեռին՝ մուրճեր կախ 'ի կողին՝
Թոյլ գեղարդից գամեր՝ սապարի փակ տային։
Գեվացիք փողցներ բռներ էին գունդ գունդ
Դաղրածուներ գային բիրերով սիրտ 'ի թունդ։

ՊԱՅԱՄՈՆ ԵՒ ԱՐԿԻՏ

Անկլիական ազգին վիճակն այն ժամանակը բաւական թշուառ էր։ Բիչարտ Թագաւորը տարակայ և Աւստրիոյ նենդաւոր և անգութ դքսին իշխանութեան ներքև դերի կ'ինար. նոյն իսկ իր դերութեան վայրն անյայտ էր, և իր հպատակներէն շատերն որ նոյն պահուն՝ ամէն տեսակ բռնութեանց ենթակայ էին, վեր 'ի վերայ գիտէին իրենց վերհասելին ճակատագիրը։

Ճօհն իշխանը՝ Առիւծասիրտ Բիչարտի անհաշտ թշնամի՝ ֆրանսայի Թագաւորին հետ միացած՝ իր բոլոր ազդեցութիւնը կը գործածէր Աւստրիոյ դքսին վրայ՝ որպէս զի իր եղբօրը դերութիւնը երկարէ, թէև ասորմէ շատ բարիք տեսեր էր։ Նոյնպէս իր կուսակցութիւնը զօրացնելու կ'աշխատէր տէրութեան մէջ՝ որպէս զի՝ եթէ Թագաւորը մեռնի՝ ինքը աթոռն ելնէ՝ պահաժառանգ իշխանին տեղ՝ որ էր Բլանդաժընէ Ժէօֆֆրէյի որդի՝ Բրիտանիոյ գուքս Արթիւրն՝ Բիչարտի կրտսեր եղբայրն, այլ Ճօհնէն մեծը։ Ինչպէս որ յայտնի է՝ վերջէն այս յափշտակութիւնը 'ի կատար հանեց։ Իր թէթև, շուայտ և նենդաժէտ բնաւորութեամբը Ճօհն դիւրաւ շահեցաւ ոչ միայն այն անձերն որ իրենց մեղսպարտ դաւերուն համար Բիչարտի բարկութենէ վախնալու իրաւունք ունէին՝ այլ նաև այն «անօրէն քաջերուն» դասն՝ որ խաչակրութենէ դարձեր էին և Արևելքի մղութեանց մէջ շաղուելով՝ իրենց կալուածքը սպառուեր, բնաւորութիւնը կարծրացեր էր և քաղաքային խուովութիւններու մէջ ճարակ գտնելու կ'յուսային։

Հասարակաց թշուառութեան և երկպառակութեան այս որոմներուն՝ հարկ է յաւելուլ նաև այն անհամար վտարականներն՝ որ աւա-

տական իշխաններու բռնութենէ և անտառային օրինաց խստութենէ յուսահատութեան մէջ ընկնելով՝ զատ զատ դունդեր կազմեր՝ դաշնակցեր և անտառներ ու դաշտեր գրաւելով՝ դիմադրաւ կ'կենային երկրին օրինաց և արդարութեան ատեաններու դէմ։ Նոյն իսկ ազնուականներն՝ իրենց դղեակներուն մէջ ամրացած՝ իբր ինքնազլուխ մանր իշխաններ՝ կ'ապրէին իրենց հողերուն վրայ՝ և ուրիշ խումբերու գլուխը կ'անցնէին, որ միւս վտարանդի վտարականերուն չափ անօրէն էին և բռնաւոր։ Այս զօրքերը պահելու, նոյնպէս՝ ամբարտաւանութենէ յառաջ եկած շռայլութեան և ճոխութեան ծախսերն հոգալու համար՝ ազնուականները ծանր վաշխով ահագին դումարներ հրէաներէն փոխ կ'առնուին. դումարներ որ՝ իբր քաղցկեղ՝ իրենց կալուածը կ'կրծէին, և անբուժելի կը դառնար՝ եթէ անոնցմէ բռնութեամբ իրենց պարտատէրներէն ազատելու առիթ մը չպատահէր։

Իրայ այս դժբաղդ վիճակէն՝ Ընկլոյ ժողովուրդը ծանր հարկերու տակ կ'ընկճէր, ներկային մէջ սաստիկ կ'տառապէր, և ապագային մէջ աւելի սոսկալի տառապանք կրելու կ'երկնչէր։ Այս թշուառութեանց չափը լցաւ՝ տարափոխիկ ախտ մ'ևս վրայ գալով՝ որ շատ վտանգաւոր էր և երկրին չորս դին կ'ճարակէր անհնարին կոտորած ընելով ստորին կարգի մարդոց մէջ, որ անշահ մնունդ և աղտեղի բնակարաններ ունէին, թէև ասոնց բաղդաւորելի նախանձելի էր ապրողներուն՝ քանի որ կ'աղատէին այն չարիքներէն զոր ապագան կ'սպառնար։

Սակայն այս դառնադառն աղէտից մէջ՝ աղքատ և հարուստ, ռամիկ ու ազնուական՝ մեծ հետաքրքրութեամբ կ'վազէին նիղակախաղ դուպարի մ'առթիւ որ այն դարուն ամենէն երևելի տեսարանն էր, ճիշտ այն հետաքրքրութեան նման որով կ'վազի Մասրիսի սովալլուկ քաղաքային՝ որ՝ թէև թանկ մը չունի իր ընտանեաց ուտելիքն հոգալու՝ բայց ցուլամարտին կ'վազէ։ Ո՛չ պարտաւորութիւն, և ոչ ծերութիւն արգելք չեն լինիր Սպանիացւոց այս տեսակ տեսարաններ յաճախելու։

Ինչպէս որ այն ժամանակը կըսէին՝ Զինուց հանդէսն Էշպի քաղաքը՝ Լիսիսդրի նահանգին մէջ տեղի պիտի ունենար, վասն զի ամենէն հռչակաւոր ախոյաններն՝ նոյն իսկ ՃՕՀՆ թագաւորին ներկայութեան՝ ասպարէզ պիտի իջնէին, և ինքն անձամբ այս հանդէսը պատուելու փութալիր էր։ Ուստի այս դուպարն առ հասա-

բակ ամենուն ուշադրութիւնը գրաւեր էր, և ամեն դասու մարդկան անհամար բազմութիւն մ'որոշեալ առտու մրցարանին տեղը եկեր հասեր էին։

Այս տեսարանս վեպային երևոյթ մ'ունէր։ Եշալի քաղքէն մղոն մը հեռի անտառ մը կար՝ որուն եզրը կ'տարածուէր լայնայիր և գալարապեղ մարգագետին մը. սոյն մարգին մէկ կողմէն կ'պատէր գուրակը, միւս կողմէն առանձին կաղնիներ՝ որոց մէկ քանին յաղթ էին և ստուար։ Գետինն՝ որ կարծես թէ զինական մարզից համար յատկապէս յարդարուեր էր՝ ամէն կողմէն զուռ 'ի թափ կ'սահէր կ'իջնէր մինչև հարթ վայր մ'ուր հաստատուն պատնէշներու միջոցաւ ցանկ շրջապատեր էին, և որ քառորդ մղոնի չափ երկար և շուրջ կէս մղոն լայն էր։ Մրցարանին հարաւային և հիւսիսային կողմերը՝ մարտիկներու մուտ տալու համար փայտէ դռներ կային՝ ուսկից երկու ձիաւորներ կարող էին քովէ քով անցնիլ։ Իւրաքանչիւր դրան մօտ երկու սուրհանդակ կեցեր էին, վեց փողարներու և նոյնչափ քարոզներու հետ, նոյնպէս դունդ մը զինակիր պահապաններ՝ որպէս զի կարգ կանոն պահեն և այս զինուորական դուպարին մասնակից դանուելու համար ներկայացող աստեղներու հանդամանքը ստուգեն։

Հարաւային դռնէն անդին՝ հողին բնական բարձրութեամբ յօրինուած հողաբլրի մը վրայ՝ հինգ փառաւոր վրաններ կ'տեսնուէին կարմիր ու սև դրոշակներով զարդարուած՝ որ հինգ մենամարտիկ ասպետներու ընտրած դոյներն էին։ Վրաններուն լարերն էին նոյնագոյն։ Մէն մի վրանի առջև կախեր էին մարտիկ ասպետին վահանը՝ որուն մօտ կեցեր էր զինակիրն այլանդակ կերպով ծպտեալ՝ այս է իբր վայրենի կամ շահապետ, կամ իբր ուրիշ մտածին էակ մը՝ ինչպէս որ վերջապէս իր տիրոջը ճաշակը և դուպարին ժամանակ խաղալիք դերը կ'պահանջէր։

Կեդրոնին տաղաւարը՝ իբր պատուոյ վայր՝ յատկացած էր Պրայնտը Պուա Կիլբերի՝ որուն համբաւն՝ ամէն ասպետական խաղերու մէջ՝ նոյնպէս սոյն դուպարին մասնակցող ձիաւորներու հետ ունեցած յարաբերութիւնը՝ այնպէս բերեր էին որ հետամուտներու գնդին մէջ եռանդագին ընդունուեր էր և մինչև անդամ իրենց պետն ու առաջնորդը հուշակեր էին զանի, թէև տակաւին նոր տեսնուեր էին անոր հետ։

Իր տաղաւարին մէկ կողմը կանգներ էին Բէժինալտ Ֆրոն-տը-

Պէօի և Գիլիպ տը Մալվուազէնի վրանը, և միւս կողմը՝ Հիւկ տը Կրէնդմէնիլ՝ դրացի՝ ազնիւ պարոնի մը, որուն նախնիքն՝ Վիլյէմ յաղթողին և իր որդւոյն Վիլյէմ Ռուֆուսի օրօվը արքունի մատակարար էր. իսկ Ռալֆ տը Վայրն՝ որ Ս. Երուսաղէմի կարգին ասպետ մ'էր, և Եշպի-տը-լա Զուշի մօտ՝ Հիտէր կոչուած տեղը քանի մը հին կալուածներ ունէր, հինգերորդ վրանին ընկերն էր։ Մրցարանին մուտքը՝ վեց կանգուն լայն անցք մը թեթև զառ'ի թափով մը դէպ 'ի հողաբլուրը կ'տանէր՝ որուն վրայ վրաններ կանգներ էին։ Այս անցքն երկու կողմէն ամուր պատնէշներ ունէր, նոյնպէս և վրաններուն առջևի դաշտավայրը, և այս ամէնը զինակիրներ կ'պահպանէին։

Մրցարանին հիւսիսային կողմի դուռն ալ նոյն մուտքն ունէր՝ երսուն ոտք լայն, որուն ծայրը ընդարձակ միջոց մը կար յանկապատ՝ այն ասպետներուն համար որ ախոյաններու դէմ 'ի պայքար ելնելու տրամադիր էին. նոյն յանկապատէն հեռու վրաններ կային՝ որոց մէջ ամէն տեսակ պաշար և ուտեստ դրեր էին, նոյնպէս զինագործներ, պաշտօնատարներ և ուրիշ շատ մը սպասաւորներ, որպէս զի 'ի հարկին պատրաստ դտնուին պէտք եղածը հոդալու։

Մրցարանին արտաքին կողմն առ ժամանակեայ պատշգամներ կային, օթոյներով և դորգերով ծածկուած՝ և հանդիսատես կանանց և ազնուականներու համար բարձերով դարդարեր էին։ Այս պատշգամներու և մրցարանին միջևը տեղ մը պահուած էր զեղացի զինուորականներու և ստորին կարգէն աւելի բարձր անձերու. այս միջավայրը թատրի մը ստորավայրին (pit) կ'նմանէր։ Խառն 'ի խուռն խուժանը՝ յատկապէս պատրաստուած դալարուտ բլրակներու վրայ կ'դադարէր և՝ այս բնական բարձրութենէ՝ կարող էր պատշգամներուն վրայ տիրել և մրցարանին տեսքը վայելել ասնարդել։ Այս կայաններու շատութիւնը բաւական չսեպելով՝ հարիւրաւոր հանդիսատեսներ մարդաղետինը շրջապատող ծառերուն վրայ ելեր դադարեր էին, և նոյն իսկ շինական մօտաւոր եկեղեցւոյ մը զանգակատունը խռներ էին։

Այս ընդհանուր կարգադրութիւններէն ետև՝ կ'մնայ մեզ յիշատակել մրցարանին արևելեան կողմը, և նոյն իսկ կեդրոնատեղին կանգնած պատշգամն, որ՝ հեռևապէս՝ ճիշդ այն վայրին դիմացը կ'ընկնէր՝ ուր մարտիկներն իրարու դիմի դարնուէին։ Այս պատշ-

դամը վիւններէն աւելի բարձր էր, աւելի շքեղ և զարդարուն և տեսակ մը դահ ունէր ամպհովանիով՝ որուն վրայ արքունի զինաշրջանները կ'փայլէին։ Զինակիրներ, սպաներ, թիկնապահ զինուորներ հագուած շքուած այն պատշգամին բոլորը շարուեր էին, որ ՃՕՀՆ իշխանին և հետևորդներուն սահմանուած էր։ Մրցարանին արևմտեան կողմը՝ սոյն պատշգամին դիմացն նոյն բարձրութեամբ ուրիշ պատշգամ մը կ'տեսնուէր որ աւելի պճնազարդ էր քան ՃՕՀՆ իշխանինը։ Ամենազեղանի պատանիներու և օրիորդներու խումբ մը՝ որ կանաչ ու վարդագոյն քմածին զգեստով զարդարուեր էին՝ հանդոյն աթոռ մը կ'բոլորէին։ Դրօշներու և նարօտներու մէջ՝ որոց վրայ նշմարելի էին վիրաւոր սիրտեր, հըրատապ սիրտեր, արիւնալի սիրտեր, աղեղներ և կապարճներ, մէկ խօսքով Կուպիտոնի յաղթանակին նուիրուած ամէն զուարճիկներ, շողշողուն արձանագիր մը կ'տեսնուէր՝ որմէ հանդիսականները կ'հասկնային թէ այն պատուոյ դահը Գեղեցիկ-Ընկեր և Սիրոյ Ընդունելոյն յատկացած է։

Սակայն մը տիկինը սիրտ ներկայէր Գեղեցկութեան թագուհին այս պարագայիս մէջ՝ ոչ որ կարող էր գուշակել։

Նոյն միջոցին ամէն դասէ զունդ զունդ հանդիսականներ յառաջ կ'անցնէին որ իրենց յատուկ կայանները նստին, թէև որոշ տեղերու համար կռիւը պակաս չէր։ Քանի մը պահապան զինուորներ առանց դժուարութեան շատ մը վէճեր դադրեցուցին, և իրենց տապարներու կոթերն, և թուրերու դաստակներն՝ իբր հզօր փաստեր՝ գործ տեսան ըմբոստներն զգաստութեան բերելու համար։ Դարձեալ բարձրագոյն և հակառակ դասի մարդկան վէճերու ալ վերջ տրուեցաւ սուրհանդակներու՝ կամ Վիլլէմ տը Վիվիլ և Ստէֆըն տը Մարվիլալ՝ հանդիսին վերակացուներու ձեռօք, որ ոտքէն յղլուխ զինեալ՝ վեր վար մրցարանին ամէն կողմերը կ'վազէին որպէս զի հանդիսականները կարգի բերեն։

Տակաւ առ տակաւ քաղաքային հաղուստով եկող որեարն ու ասպետները պատշգամները լցան՝ որոց պերճագոյն վերարկուները կանանց զուարթագին և չքնաղ զգեստներու հետ հակադատակեր մը կ'ընծայէին։ Այս կիներն որ մարդկան դասէն աւելի շատուր էին՝ վաղեր եկեր էին որպէս զի վայելեն այնպիսի տեսարան մ'որ թերևս իրենց ախորժելի չերևէր խիստ վանդաւոր և արիւնահեղ լինելուն։

---

Խմբագիր-Տնօրէն Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

## ԵՐԳ Դ.

## ՄԱՆՈՒԹԻՆ ՎԱՀԱԳՆԻ

1 Զարգանայր Վահագն յասպարանս նախնեաց,
Յերախան որդւոյ քաջ աղդապետաց,
Եւ դաստիարակ ընտրեալ էր Վարդէս,
Հաղորդել մանկան մարդս հրահանգաց։
2 Ասէր ընդ նմին և Տիգրանուհի,
Փայլէր ըստ արփւոյ յոլորտս աշխարհի.
Հնչէր գովեստից փող զօրիւրդէն,
Գան արքայորդիք յայց Հայաստանի։
3 Մինչ Յարմաւիրայն արքենի դարպաս,
Տանէին սոյա կրթութեան սպաս,
Տիգրան ուշ դնէր իւրում՝ պետութեան,
Կազդուրել զգահ որդւոյն դեռահաս։
4 Նորակարդ պճնեաց զտուն արարատեան,
Զինազարդ եղեն գունդք սպանդապետեան.
Վաճառք, տուր և առք 'ի Հայաստանեայս,
Ճոխութեամբ լցին զերկիրն ամենայն։
5 Ո՛չ ևս գոյին դաշտք ամայացեալք,
Ո՛չ հովիտք, լերանց ծոցք խոպանացեալք.
Արօրք, դերանդիք, մանգաղք և խոփք սուր
Փայլին մշակաց 'ի ձեռս արծնեալք։
6 Մթերք արծաթոյ, ոսկւոյ, զոհարաց,
Ո՛չ միայն զեղան 'ի զանձ արքունեաց,
Այլ և յղփացան պետք և տանուտերք,
Եւ շքեղացան տունք սոսկականաց։
7 Փոխանակ եղանց 'ի սայլս զլանատորս,
Լծեցան նժոյգք 'ի կառս անուտորս,
Յաճախեաց 'ի դաշտս երամակ ձիոց,
Ստացաւ Հայաստան իւր հեծելազօրս։
8 Յայնմհետէ և քաղաք Արմաւիր,
Զունելով փողոցս զիւր յարմարագիր.

Զդայ զանտեղի անձկութիւն ուղեայ,
Սկսաւ կերտել պողոտս լայնայիր։
9 Ի միջակիտին գարպաս արքունեայ,
Եւ շուրջ զնովաւ տունք ազգապետաց,
Անդր ևս քան զայն են արքայազունք,
Եւ հուսկ բազմութիւն խուռն բնակչաց։
10 Արմատիր քաղաք չէր քառակուսի.
Այլ բոլորաձև՝ գոգ ինանկիւնի,
Պողոտայք նորին էին շրջմոլիկք,
Եւ բազում՝ ուրեք անանցանելի։
11 Առ իւրաքանչիւր անկիւն պարսպին,
Տիգրան ռահ հորդեայ 'ի դրանց դարպասին,
Որով փողոցք ինն բացան լայնարձակք,
Եղեւ դիւրութիւն եկին և մտին։
12 Շուկայք, որդոստայք և տունք վաճառաց,
Նոր ձև զգեցան 'ի մէջ փողոցաց.
Առևտուր շարժեաց զիւր թևս ծանրեալ,
Հայք ճաշակեցին բերկրութիւն կենաց։
13 Ընդ փոյթ հեռացան 'ի տանց արամեանց,
Աղտեղի դրոշմք դեղջուկ զծծութեանց,
Եմուտ և յոգդ մեր ճաշակ վայելուչ
Աղատ 'ի կնքոյ հեգ շուայլութեանց։
14 Ինքն Տիգրան էր նախատիպ բարեաց,
Զոր կամէր հիմնել 'ի մէջ համազգեաց,
Պարկեշտ յուսելիս, պարկեշտ յրմնելիս,
Համեստ 'ի հանդերձս պերճ զարդարանաց։
15 Զարուհի տիկին և Տիգրանուհի,
Էին զարդ կանանց հիւսիսեան գահի.
Իսկ Երուանդուհի բամբիշ Վարդիսեան,
Գարծանք էր տիկնանց Հայոց աշխարհի։
16 Սոքա անանցնելի ընդ արքայորդւոյն,
Էին թէ 'ի տան, թէ 'ի դաշտ որսոյն,
Ի կայթս պարուց, 'ի ցուցս կաքաւուց,
Ի լուր ցցասաց գողթնացի երգոյն։
17 Մինչ զայր փանդռահար ձայնեալ երգաբան,
Նախ 'ի գահլիճ իւր ժողովէր Տիգրան.
Երգէր և Վահագն զվէպս նախնեաց,
Եւ վառէր յոգին հուր դիւցազնական։

ԵՐԳ Ե.

## ԱԺԴԱՀԱԿ ԵՒ ԿԻՒՐՈՍ

1 Մինչ հաս Վահագնի պատանեկութիւն,
Տիգրան կատարէր արութիւնս անհուն,
Սուր նորա շողայր յափունս Միջերկրեայց,
Փառաց ժառանգեայց զՄեծ պատուանուն։
2 Յայսմ միջոցի պետութեան Մարայ,
Տիրէր զօրութեամբ բաղում աշխարհայ,
Եւ միահեծան արքայն Աժդահակ
Կայր հասեալ 'ի ծաղ անուսման փառայ։
3 Էր սորա դստրիկ Մանդանէ անուն,
Որոյ համբաւեալ էր դեղեցկութիւն,
Բաղում թագաւորք և արքայազունք,
Խնդրէին զնա յիւրեանց հարսնութիւն։
4 Արքայն Աժդահակ ետես յերազի,
Յանստից դստեր բղխէր աղբիւր մի,
Որոյ ուղիք առատ ընուին զերկիր,
Եւ ջուր ծովանման ճնայր 'ի դաշտի։
5 Զարհուրեալ շրտեաւ 'ի խորին քնոյ,
Կոչեայց զնմաստունս աշխարհին իւրոյ,
Պատմեայց զերազ իւր, և զայս պատասխան
Իբր 'ի միոջէ լուաւ բերանոյ.
6 Դուստրդ քո ծնցի որդւ զաւակ մի,
Որ ելցէ 'ի ծաղ փառայց աշխարհի.
Լայցէ հուչակաւ իւրոյ քաջութեանց,
Զամենատարած լայնութիւն երկրի։
7 Դարձեալ Աժդահակ յանուրջս տեսչեան,
Անկաւ յարհաւիրս ցնորիւք խօլական,
Կոչեայց զնզմս իւր և զդէտս Մարաց,
Զի փարատեսցեն զմեզ տրտմութեան։
8 Ասէ՝ դուստրդ իմ՝ յանուրջս իմ ննջէր,
Եւ ծառ յարդանդէ նորին բուսանէր,
Ամբառնայր ծառն այն, հասանէր յերկինս,
Եւ ստուերք իւրովք անհուն դաշտս ծածկէր։

9 Տեսիլդ այդ ասեն՝ նոյն է ընդ նախկնոյն,
Գուշակէ զծնունդ դիւցազն որդւոյն,
Զոր թէ վաղ, կանուխ, և թէ անադան,
Հանդերձեալ է տալ Մանդանէ զշխոյն։
10 Անկաւ երկիւղ մեծ 'ի սիրտ արքայի,
Կոչեաց 'ի խորհուրդ զծերս աշխարհի,
Ըստ սադրել նոցա ետ զՄանդանէ,
Կնութեան տխմար Կամբիւսայ պարսկի։
11 Իսկ յետ հարսանեաց առաքեաց զփեսայն
Իբրև կուսակալ 'ի ծագ տէրութեան,
Զի թէ դուստր իւր ծնցի զիւր որդի,
Մանուկ չունիցի զհայր՝ իւր պաշտպան։
12 Այո՛, Մանդանէ ծնաւ զիւր որդի,
Բայց զնա բարձին ծառայք արքայի,
Աժդահակ յանձնեաց զմանուկն ցԱրբակ,
Հրամայեալ զենուլ, ձգել 'ի բացի։
13 Արբակ զանգիտեալ յահէն Մանդանեայ,
Զմանուկ արքայազն ետ Մատրադատայ,
Զի զհրաման անդութ արքայի,
Հանեալ 'ի գլուխ ծանուցցէ նմա։
14 Մատրադատ հովիւ էր արքունական,
Եւ կին՝ իւր տանջէր յերկունս ծննդեան,
Իբրև հաս յիւր տուն, ետես զի կին իւր,
Ծնեալ էր զորդի անշունչ, անկենդան։
15 Մինչդեռ անզգայ տագնապէր այն կին,
Մատրադատ էառ զիւր մեռեալ որդին,
Ի տեղի նորա զորդին Մանդանեայ,
Ետ խանձարրապատ ծննդականին։
16 Ի դառնալ յուշ՝ իւր կին Մատրադատայ,
Իբրև զիւր էառ զծնունդ Մանդանեայ,
Մատրադատ ձգեաց զորդին իւր մեռեալ,
Ծառայք սպատեցին զայն Աժդահակայ։
17 Աժդահակ հանդեաւ 'ի տատամուլթեանց,
Լուեալ՝ թէ թոռն իւր կերեալ է 'ի շանց,
Վասն այն զՄանդանէ առաքեաց 'ի Պարսս,
Փոխարէն որդւոյն սուեալ բաղում դանձ։

ԵՐԳ Զ.

## ԹԱԳԱՒՈՐԵԼ. ԿԻՒՐՈՍԻ ։

1 Մատրադատ Հովիւ պարդևեայ սանուն,
Ըստ կոչման նախնեայց Քայխոսրով անուն,
Այլ փաղաքշաբար կոչեցաւ Կիւրոս,
Զարդացոյց զնա յանդիտս մօրուն ։
2 Մանուկ էր Կիւրոս, եղև պատանի,
Քաջ, Ճապուկ, Ճարտար, տեսլեամբ գեղանի,
Բարք իւր արարին զնա խաղակից,
Մանկանց որերաց դրան արքունի ։
3 Ի Խաղի իմիք Կիւրոս ընտրեցաւ,
Թագաւոր մանկանց և յաթոռ նստաւ,
Բաշխեաց ընկերաց բարձս աւադութեան,
Եւ 'ի խաղակցաց անկեղծ սիրեցաւ ։
4 Վասնորոյ և միշտ յորժամ խմբէին,
Զ Կիւրոս արքայ կացուցանէին.
Եւ նա անկաշառ իւր խոհեմութեամբ,
Յարգ և ծանրութիւն ընձեռէր խաղին ։
5 Ցաւուր միում մինչ խաղային սոքա,
Մին 'ի մանկլաւկաց անպոսնեաց զարքայ,
Այլ մանուկ արքային անաչառաբար,
Ի ձեռն դահճի դան արքայց նմա ։
6 Մանուկն լալով քանքարտեաց իւր մօր,
Մայրն առն իւրում առ դրան հղօր,
Հայրն՝ արքային, արքայն եկն ծպտեալ,
Ծանեաւ զի այն խաղ կայր հանապազօր ։
7 Մատեաւ առ Կիւրոս, եհարց քաղցրագին,
Էր՞ տուաւ պատիժ այն պատանեկին,
Կիւրոս սէգ արար բանին պատասխան,
Զի ըմբոստ դտաւ դէմ իմ հրամանին ։
8 Կրկնեայ Աժդահակ, որոյ ես որդի
Կիւրոս ընդհատեայ, Մատրադատ Հովուի ։
Այս կարճ պատասխան յարոյց կասկած մեծ,

Յաղագս Կիւրոսի 'ի սիրտ արքայի։
9 Կոչեաց զՀովիւն, արար քննութիւն,
Եւ ծանեաւ զիրացն պարզ ստուգութիւն,
Թէ նա է իւր թոռն՝ ծնունդ Մանդանեայ,
Կիսեալ արդէն զիւր պատանեկութիւն։
10 Դառնացաւ յանձն իւր ազգայն Աժդահակ,
Ի Ճաշ հրաւիրեաց զատելին Արբակ,
Թայց զի խաղակից ունիցի Կիւրոս,
Հրամայեաց ածել ընդ իւր և զորդեակ։
11 Ընդ հաս 'ի դարպաս որդւոյն Արբակայ,
Զենուլ 'ի խորտիկս հրամայեաց արքայ,
Այլ 'ի մոռանել յարբունս գինեբուայ,
Ցայտնի եղև հօրն խաղ Աժդահակայ։
12 Վասն Կիւրոսի 'ի խորհուրդ մտին,
Իղձք, հարցուկք և դէտք Մարայ աշխարհին,
Եւ ասեն ցարքայ, էլ բան անրջոց,
Կիւրոս թագաւոր եղև 'ի խաղին։
13 Մերժել կամելով յարքունի տանէն,
Առաքեաց արքայ 'ի յԵկբատանէն,
Զ Կիւրոս 'ի Պարսս առ Կամբիւս հայր իւր,
Զի հեռի լիցի 'ի զօրականէն։
14 Այլ Կիւրոս 'ի Պարսս մնր իւր զրդռմամբ,
Նաև Արբակայ զաղտ դեսպանութեամբ,
Յապստամբութիւն վառեալ զՊարսիկս,
Թագաւորեաց անդ վտարանջութեամբ։
15 Լուր առ Աժդահակ տակաւ ժամանէր,
Դաշն Արբակայ, Կիւրեայ ստուգէր,
Մտատանջութիւն էած թմրութիւն,
Արքայ յերազին նորոգ զարհուրէր։
16 Տեսանէր կին մի ծիրանազդեստեալ,
Ի քարակտուր ծայր լերին նստեալ,
Երկունք ծննդեան զնա տանջէին,
Երեք զիւցազունք յայտնեցան ծնեալ։
17 Մին բազմեալ յաւիւծ յարևելս զիմէր,
Երկրորդն հեծեալ յինձ՝ 'ի մուտս խիզախէր,
Իսկ երրորդ հզօրն նստեալ 'ի վիշապ,
Ընդդէմ արքայի ճակատ յարդարէր։

ԵՐԳ Է.

## ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ՏԻԿՆԱՆՑ ՏԻԿԻՆ ՄԱՐԱՑ

1 Ի կոչ արքայի առաղք խմբեցան,
Զչարաղուշակ անուրջսն լուան,
Ասեն մին քաջայ է ինքն Կիւրոս ;
Երկրորդն է Արբակ նիւթիչ նենդութեան ։
2 Իսկ որ 'ի վիշասն էր բաղմեալ հզօր,
Ի արքայն հայոց Տիգրան մեծազօր,
Զոր թէ մարթասցիս ածել զբառամբ,
Կիւրոս և Արբակ մնասցեն անզօր ։
3 Հաճոյ թուեցաւ խորհուրդ որերայց,
Աժդահակ ինքնին հնար նոր նիւթեաց,
ԶՏիգրանուհի մեծամեծ օժտիւք,
Տիկնանց տիկնութիւն յիւր հրաւիրեաց ։
4 Ի դալ դեսպանայ Մարոց արքային,
Հասին և հրեշտակք Կիւրոսի Պարսկին,
Տիգրան զքոյր իւր ետ Աժդահակայ,
Իսկ ընդ Կիւրոսի հաստեաց ուխտ դաշին ։
5 Ընդ Տիգրանուհեայ եղև ուղեկից,
Պատանին Վահագն 'ի գլուխ սպայից,
Իբր հարսնածու չքնաղ դշխոյին,
Դէպ յառագաստ առ արքայն արքայից ։
6 Նոր օրինակ էր չու կարաւանին,
Թևակոխէր նոին Մասեաց արծուին,
Երթային երկու վարդք Արմաւիրայ,
Ընդ որս արամեանց սիրոք զօղեալ էին ։
7 Ընդ առաջ կանխեաց արքայն Աժդահակ,
Տեսարանն էառ ձև անօրինակ,
Հայկազունք և Մարք 'ի մայր քաղաքայ ։
Զնորատեսիլ կազմեցին բանակ ։
8 Եվ Տիգրանուհի 'ի պատգարակէն,
Եմուտ յապարանս ուր հարսանիք են,
Տիկնայց տիկնութեան փառք նախանձելի,
Զօր նորհարսնութեան նորին պատկեն ։

9 Պատուով ընկալաւ արքայն Աժդահակ,
Զքաջիկ Վահագն Տիգրանին զորդեակ,
Բայց ընդ փոյթ եհեղ 'ի սիրտ արքային,
Զթոյն նախանձու արծուոյն դիտակ,
10 Հանդէպ արքունեաց խմբեցաւ կրկէս,
Ուր Տիգրանուհի բազմեցաւ 'ի տես,
Տիկնայք, մեծուհիք, օրիորդք Մարաց,
Եւ պարք քաջարեաց կային յայն հանդէս։
11 Նախ ըմբիշք մատեան յայն մեծ տեսարան,
Ուր ոգորէին քաջք սիրտ 'ի բերան,
Ցաղթականն առնոյր խիլացս պարգևաց,
Զոր Տիգրանուհի վարկանէր արժան։
12 Դարձոյց առ Վահագն զիւր բան Աժդահակ,
Ասէ՝ զո՞ 'ի Հայս խաղ զայս օրինակ.
Վահագն ժպիտ ծածկեալ 'ի շրթունս,
Ասէ՝ և իմ լեալ է յայսմ յաղթանակ։
13 Զայս ասացեալ ել և արձանացաւ։
Ըմբիշ մի հուժկու առ նա մերձեցաւ,
Զև էին հարեալ բուռն զիրերաց,
Ըմբիշն Մարաց անշունչ զլորեցաւ։
14 Զըմբշամարտ հանդէսն ընդ փոյթ փոխեցին,
Ի նոր բռնամարտ 'ի պայքար բազկին,
Այլ և յայս կրկէս ընդդէմ Վահագնի,
Բռնամարտիկ ոք չեկաց 'ի կային։
15 Արքայն հրամայեաց կազմել մենամարտ,
Սուսերօք, բրօք տալ ճակատամարտ,
Այսմ իսկ սպասէր Վահագն քաջիկ,
Զի հրաւիրեսցի 'ի սուսերամարտ։
16 Ճապաղէօք արեան լցաւ տեսարան,
Բազում մարտադիրք թաւալգլոր անկան,
Քաջարիք Մարաց՝ զոր պատերազմողք,
Խոցք և վիրաւորք եղան 'ի կործան։
17 Տիկնաց տիկնութեան օր Տիգրանուհեայ՝
Արկ հուր նախանձու սիրտ յԱժդահակայ,
Երկեաւ թէ զուցէ սա է այն վիշապ,
Զոր ցարդ զուշակէր յանձին Տիգրանայ։

ԱՐԵՒԵԼԵԱՆ

# ՄԱՄՈՒԼ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍԵԱՑ

Ա. ՏԱՐԻ ՅՈՒՆԻՍ 1871 ԹԻՒ 6

## ԱԶԳԱՅԻՆ

### ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ

. . . Խմբագիր ,*

Խնդրում եմ ձեր հրամանքէն այս մի քանի տողով նամակս ձեր օրագրումը հրատարակել և նրա մէջն եղած երդմնաթուղթն էլ միասին՝ մեր Թուրքիոյ ազգայնոց ծանօթութեան համար ։

Ես մի քանի անգամ եղաւ՝ որ մեր Հայոց ազգային Ընդհանուր Ժողովումը գտնուում եմ և տեսնում եմ որ նա զբաղած է կաթողիկոսական խնդիրներով ։ Այդ Ժողովին արձաղանք են լինում և տեղացի լրագիրները ։ Թէ ազգային Ընդհ. Ժողովն և թէ Հայոց լրագիրներն նկատելի

*Ռուսիաբնակ Հայոց և կաթողիկոսական արդի վիճակին ներհուն՝ ուսումնական Մեծ. ազգային մ'ուղղած է մեզ այս նամակն, որ այս խնդրոյ մասին մեր արդէն հրատարակած խորհրդածութեանց մեծաւ մասամբ կ'համապատասխանէ ։ Խ. Խ